

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ
ԱՋԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ) և Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ)՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետությունը (այսուհետ՝ Սերբիա)՝ մյուս կողմից,

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Սերբիայի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ազատ առևտուրն ապահովող նախկինում հաստատված հարաբերությունները,

ՁԳՏԵԼՈՎ ԵԱՏՄ անդամ պետությունների և Սերբիայի միջև զարգացնել և խորացնել փոխադարձ առևտրային և տնտեսական համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ շուկայական տնտեսության սկզբունքների պահպանման հարցում՝ որպես առևտրային և տնտեսական հարաբերությունների հիմքի իրենց հանձնառությունը և ԵԱՏՄ անդամ պետությունների և Սերբիայի միջև փոխշահավետ առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացմանն ակտիվ մասնակցելու ու դրանց ընդլայնմանը նպաստելու իրենց մտադրությունը,

ՍՏԵՂԾԵԼՈՎ ապրանքների ու կապիտալի ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ պայմաններ ԵԱՏՄ իրավունքին, ԵԱՏՄ անդամ պետությունների և Սերբիայի օրենսդրությանը, ինչպես նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կանոններին համապատասխան,

ՀԱՅՏՆԵԼՈՎ իրենց պատրաստակամությունը և լիակատար աջակցությունը ԱՀԿ-ին հաջողությամբ անդամակցելուն և ընդունելով, որ ԵԱՏՄ-ի, Բելառուսի Հանրապետության և Սերբիայի անդամակցությունն ԱՀԿ-ին բարենպաստ պայմաններ կստեղծի բազմակողմ առևտրային համակարգին դրանց ինտեգրումը խորացնելու համար և կընդլայնի սույն Համաձայնագրի Կողմերի միջև համագործակցությունը,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի մասին.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

Սույն Համաձայնագրի Կողմերն են ԵԱՏՄ անդամ պետությունները և ԵԱՏՄ-ը՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրից (այսուհետ՝ «ԵԱՏՄ մասնի պայմանագիր») բխող իր իրավասության համապատասխան ոլորտներում, որոնք գործում են համատեղ կամ անհատականապես՝ մի կողմից, և Սերբիան՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր):

Կողմերն ազատականացնում են փոխադարձ առևտուրը համաձայն սույն Համաձայնագրի դրույթների և ԱՀԿ կանոնների, ներառյալ մասնավորապես՝ Սակագների և առևտրի 1994 գլխավոր համաձայնագրի (այսուհետ՝ «ՍԱԳՀ 1994») XXIV հոդվածը, ԵԱՏՄ և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի ռեժիմ սահմանելու նպատակով:

Հոդված 2 Նպատակներ

Սույն Համաձայնագրի նպատակները, որոնք առավել մանրամասնորեն սահմանված են դրանց սկզբունքների ու կանոնների միջոցով՝ հանդիսանում են՝

- փոխադարձ ազատ առևտրի և տնտեսական հարաբերությունների ընդլայնումը և զարգացումը՝ Կողմերի տնտեսական զարգացման արագացման և արտադրության կայունությանը և ֆինանսական կայունությանը հասնելու նպատակով,

- սույն Համաձայնագրի իմպլեմենտացիայի և կիրառման և դրա համատեղ վարչարարություն համար արդյունավետ ընթացակարգերի ստեղծումը:

Հոդված 3 Այլ միջազգային համաձայնագրերի հետ կապ

1. Սույն Համաձայնագրի և Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաբեշի Համաձայնագրի (այսուհետ՝ «ԱՀԿ համաձայնագիր») դրույթի միջև անհամապատասխանության դեպքում ԱՀԿ համաձայնագրի տվյալ դրույթը գերակայում է այդպիսի տարբերության մասով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված տարբերության դեպքում Կողմերն անհապաղ խորհրդակցում են փոխադարձ ընդունելի լուծում գտնելու նպատակով:

Հոդված 4 Ազատ առևտրի ռեժիմ

1. Եթե սույն Համաձայնագրում այլ բան նախատեսված չէ, Կողմերը չեն կիրառում մաքսատուրքեր և մաքսատուրքերին համարժեք նշանակություն ունեցող ցանկացած վճարներ Կողմերից մեկի տարածքի ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար կամ ներմուծման հետ կապված:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում Կողմին ցանկացած ժամանակ ցանկացած ապրանքների ներմուծման համար նշանակել.

a) ներքին հարկին համարժեք վճար, որը գանձվում է հայրենական արտադրության համանման ապրանքների համար սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.

b) ցանկացած տուրք, որը գանձվում է սույն Համաձայնագրի 18-րդ, 19-րդ հոդվածներին և/կամ 21-րդ հոդվածին համապատասխան՝ Կողմի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

c) մատուցված ծառայությունների արժեքին համաչափ վճարումներ և այլ հավաքագրումներ, որոնք կիրառվում են սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածին համապատասխան:

3. Մաքսատուրքերը և մաքսատուրքերին համարժեք ցանկացած վճարները կիրառվում են այն ապրանքների նկատմամբ, որոնք նշված են սույն Համաձայնագրի հավելված 1-ում «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Սերբիայի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ» և հավելված 2-ում «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Սերբիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ»: Այդպիսի մաքսատուրքերն ու վճարները կիրառվում են ՄԱԳՀ 1994-ի I հոդվածում սահմանված՝ առավել բարենպաստության ռեժիմի գործելու պայմաններին համապատասխան:

4. Արտահանման մաքսատուրքերի կիրառումը կարգավորվում է Կողմերի օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի և ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում նրանց համապատասխան պարտավորությունների համաձայն:

Հոդված 5

Առավել բարենպաստության ռեժիմ

ՄԱԳՀ 1994-ի I հոդվածը և դրա պարզաբանման ծանոթությունները, ինչպես նաև ՄԱԳՀ 1994-ի I հոդվածով նախատեսված ռեժիմի տրամադրման պարտավորությունից ԱՀԿ համաձայնագրին համապատասխան կիրառելի ցանկացած բացառությունները,

բացառումները և ժամանակավոր ազատվելը ինկորպորացվում են սույն Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը:

Հոդված 6 Վճարումներ և վճարներ

Յուրաքանչյուր Կողմը պարտավորվում է ապահովել ապրանքների ներմուծման կամ արտահանման համար կամ դրանց առնչվող բոլոր վճարների և վճարումների համապատասխանությունը ՄԱԳՀ 1994-ի VIII հոդվածին: Այդ նպատակով ՄԱԳՀ 1994-ի VIII հոդվածը, ներառյալ՝ դրա պարզաբանման ծանոթագրությունները և Լրացուցիչ դրույթները, ինկորպորացվում են սույն Համաձայնագրում և կազմում նրա մասը:

Հոդված 7 Արգելքներ, քանակական սահմանափակումներ և համարժեք ազդեցություն ունեցող միջոցներ

Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, Կողմերը կարող են կիրառել արգելքներ, քանակական սահմանափակումներ կամ համարժեք ազդեցություն ունեցող այլ միջոցներ փոխադարձ առևտրում ապրանքների ներմուծման և արտահանման նկատմամբ, որոնք համապատասխանում են ՄԱԳՀ 1994-ի XI հոդվածին և ՄԱԳՀ 1994-ի XIII հոդվածի համաձայն:

Հոդված 8 Ազգային ռեժիմ

Յուրաքանչյուր Կողմը պարտավորվում է տրամադրել ազգային ռեժիմ մույս Կողմի ապրանքների նկատմամբ ՄԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան: Այդ նպատակով ՄԱԳՀ 1994-ի III հոդվածը, ներառյալ դրա պարզաբանման ծանոթագրություններն ինկորպորացվում են սույն Համաձայնագրում և կազմում դրա մասը:

Հոդված 9 Տեխնիկական արգելքներն առևտրում

1. Կողմերը համագործակցում են և տեղեկատվություն են փոխանակում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, չափագիտության, շուկայի վերահսկողության և համապատասխանության գնահատման ընթացակարգերի՝ ներառյալ հավատարմագրման, փորձարկման և սերտիֆիկացման վերաբերյալ՝ իրենց

համապատասխան համակարգերի փոխըմբռնումը բարելավելու և նրանց միջև ցանկացած տեխնիկական արգելքների առաջացումը կանխելու նպատակով:

2. Սույն Համաձայնագրի դրույթների իրագործման նպատակներով, Կողմերը խրախուսում են ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգերի, չափազիտության, շուկայի վերահսկողության, համապատասխանության գնահատման՝ ներառյալ հավատարմագրման, փորձարկման և սերտիֆիկացման ընթացակարգերի համար պատասխանատու՝ իրենց լիազոր մարմինների կամ հաստատությունների միջև երկկողմ համագործակցությունը:

3. Առևտրի պարզեցման համար Կողմերը կարող են նախաձեռնել բանակցություններ՝ փոխադարձ առևտրում տեխնիկական արգելքների վերացման, ներառյալ՝ կոնկրետ ապրանքների կամ ապրանքների խմբի համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների փոխադարձ ճանաչման մասին համաձայնագրերի ստորագրման նպատակով, :

4. Պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման պահանջները և մեթոդները սահմանում են Կողմերի պատասխանատու մարմինները կամ հաստատությունները ներմուծող Կողմի կիրառելի օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող՝ Առևտրում տեխնիկական արգելքների մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան:

5. Կողմերը համաձայնում են անցկացնել Համատեղ կոմիտեի շրջանակներում տեխնիկական խորհրդատվություններ փոխընդունելի լուծում գտնելու համար, եթե Կողմերից որևէ մեկը կհամարի, որ մյուս Կողմը ձեռնարկել է այնպիսի միջոց, որը մեծ հավանականությամբ կստեղծի կամ արդեն ստեղծել է առևտրում ավելորդ խոչընդոտ: Տեխնիկական խորհրդատվությունները կարող են անցկացվել Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված ցանկացած եղանակով:

Հոդված 10

Սանիտարական և բուսասանիտարական միջոցներ

1. Իրենց սանիտարական և բուսասանիտարական միջոցների ներդաշնակեցման ժամանակ Կողմերը կիրառում են սանիտարական և բուսասանիտարական միջոցների ոլորտում իրենց համապատասխան օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրին համապատասխան:

2. Կողմերը կարող են ձեռք բերել սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակմանը, ընդունմանը և/կամ կիրառմանն ուղղված լրացուցիչ պայմանավորվածություններ՝ Կողմերի միջև առևտրում դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:

3. Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմի գրավոր հարցման դեպքում պատշաճ ժամկետում տրամադրում է տեղեկատվություն սանիտարական և բուսասանիտարական միջոցներին վերաբերող ցանկացած հարցով, որն առաջացել է կամ կարող է առաջանալ փոխադարձ առևտրում:

4. Կողմերը համաձայնում են անցկացնել Համատեղ կոմիտեի շրջանակներում տեխնիկական խորհրդատվություններ փոխընդունելի լուծում գտնելու համար, եթե Կողմերից որևէ մեկը կհամարի, որ մյուս Կողմը ձեռնարկել է այնպիսի միջոց, որը մեծ հավանականությամբ կստեղծի կամ արդեն ստեղծել է առևտրում քողարկված սահմանափակում: Տեխնիկական խորհրդատվությունները կարող են անցկացվել Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված ցանկացած եղանակներով:

Հոդված 11 Ապրանքների ծագում

Ապրանքների ծագումը որոշվում է սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածում պարունակվող Արանքների ծագման երկիրը որոշելու կանոնների հիման վրա:

Հոդված 12 Ապրանքների տարանցում

ՄԱԳՀ 1994-ի V հոդվածը ինկորպորացվում է սույն Համաձայնագրում և կազմում դրա մասը:

Հոդված 13 Ընդհանուր բացառություններ

1. Պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի կերպով, որը կարող է հանգեցնել հավասար պայմաններում գործող Կողմերի միջև կամայական կամ չարդարացված խտրականության կամ միջազգային առևտրում քողարկված սահմանափակման, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես

ցանկացած Կողմի այնպիսի միջոցների ձեռնարկումը կամ կիրառումը խոչընդոտող, որոնք՝

a) անհրաժեշտ են հասարակական բարոյականության պաշտպանության համար.

b) անհրաժեշտ են մարդու կյանքի կամ առողջության, կենդանիների կամ բույսերի պաշտպանության համար.

c) վերաբերում են ոսկու կամ արծաթի ներմուծմանը կամ արտահանմանը .

d) անհրաժեշտ են այն օրենքներին և այլ նորմատիվ ակտերին համապատասխանությունը ապահովելու համար, որոնք չեն հակասում ՄԱԳՀ 1994-ի դրույթներին, ներառյալ ՄԱԳՀ 1994-ի II հոդվածի 4-րդ կետի և XVII հոդվածի համաձայն գործող՝ մաքսային օրենսդրության, մենաշնորհների մասին դրույթները, արտոնագրերի, ապրանքային նշանների և հեղինակային իրավունքների պաշտպանության և մոլորության մեջ զցող գործողությունների կանխարգելման մասին դրույթները .

e) վերաբերում են կալանավորների կողմից արտադրված ապրանքներին.

f) ընդունվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային գանձերի պահպանման համար.

g) վերաբերում են սպառվող բնական ռեսուրսների պահպանմանը, եթե այդ միջոցներն իրականացվում են ներքին արտադրությունը կամ սպառումը սահմանափակելու հետ միաժամանակ.

h) ընդունվում են ի կատարումն այն ապրանքների մասին միջկառավարական համաձայնագրով ստանձնած պարտավորությունների, որոնք համապատասխանում են ԱՀԿ ներկայացված և դրա կողմից չմերժված, չափանիշներին կամ որոնք հենց իրենք են ներկայացվել և չեն մերժվել.

i) որպես կառավարության կողմից իրականացվող կայունացման ծրագրի մի մաս հանգեցնում են հայրենական նյութերի արտահանման սահմանափակման , որոնք անհրաժեշտ են հայրենական արտադրությունն այդպիսի նյութերի բավականաչափ քանակությամբ ապահովման համար՝ այն ժամանակահատվածներում, երբ այդպիսի նյութերի ներքին գինը պահպանվում է համաշխարհային գնից ավելի ցածր մակարդակի վրա, պայմանով, որ այդպիսի սահմանափակումները չեն նպաստում արտահանման

ընդլայնմանը կամ այդ հայրենական արդյունաբերության պաշտպանությանը և հետ չեն կանգնում ՄԱԳՀ 1994-ի՝ անխտրականությանը վերաբերող դրույթներից.

յ) էական նշանակություն ունեն ընդհանուր առմամբ կամ կոնկրետ շրջանի համար դեֆիցիտ հանդիսացող ապրանքների ձեռք բերման կամ բաշխման համար, պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոցները համապատասխանում են այն սկզբունքին, որի համաձայն Կողմերն ունեն այդպիսի ապրանքների միջազգային մատակարարումներում արդարացի մասնաբաժնի նկատմամբ իրավունք և ցանկացած այդպիսի միջոցները, որոնք չեն համապատասխանում սույն Համաձայնագրի մյուս դրույթներին չեն գործում այն պահից, երբ դադարում են գոյություն ունենալ դրանց կիրառման պատճառ հանդիսացած պայմանները:

2. Կողմերը հնարավորության սահմաններում միմյանց տեղեկացնում են սույն հոդվածին համաձայն ձեռնարկած միջոցների և դրանց գործողությունը դադարեցնելու մասին:

Հոդված 14

Անվտանգության նկատառումներով բացառություններ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես՝

a) ցանկացած Կողմին ներկայացվող՝ որևէ տեղեկատվություն տրամադրելու պահանջ, որի բացահայտումը նա համարում է իր անվտանգության էական շահերին հակասող, կամ

b) ցանկացած Կողմին՝ այնպիսի գործողություններ նախաձեռնելուն խոչընդոտող, որոնք նա համարում է անհրաժեշտ իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար՝

i) կապված տրոհվող նյութերի կամ այն նյութերի հետ, որոնցից դրանք արտադրվում են.

ii) կապված զենքի, զինամթերքի և ռազմական նշանակության արտադրանքի առևտրի, ինչպես նաև այլ ապրանքների և նյութերի առևտրի հետ, որն իրականացվում է անմիջապես կամ միջնորդավորված՝ զինված ուժերի մատակարարման նպատակների համար.

iii) որոնք նախաձեռնվում են պատերազմի կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակներ ժամանակ, կամ

c) ցանկացած Կողմին՝ ցանկացած գործողություններ ձեռնարկելուն խոչընդոտող, որոնք, ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ստանձնած իր պարտավորությունների ձեռնարկվում են միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար:

Հոդված 15

Վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով սահմանափակումներ

1. Եթե Կողմերից որևէ մեկը ունի վճարային հաշվեկշռի էական դեֆիցիտ և արտաքին ֆինանսական դժվարություններ, կամ առկա է դրա սպառնալիքի, այն կարող է ՄԱԳՀ 1994-ի XII հոդվածին և ՄԱԳՀ 1994-ի Վճարային հաշվեկշռի մասին դրույթների մասին պայմանավորվածություններին համապատասխան ընդունել ներմուծման սահմանափակման միջոցներ: Այդպիսի սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն միջազգային արժույթային հիմնադրամի մասին Համաձայնագրի հոդվածներին:

2. Համապատասխան Կողմը անհապաղ ծանուցում է մյուս Կողմին՝ վճարային հաշվեկշռի ապահովման համար այդպիսի միջոցների գործողության դնելու մտադրության և դրանց կիրառման և դադարեցման ժամանակացույցի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակող միջոցների ընդունման կամ պահպանելու դեպքում Համատեղ կոմիտեն պետք է խորհրդատվություններ անցկացնի: Այդպիսի խորհրդատվությունների ընթացքում պետք է գնահատվեն համապատասխան Կողմի վճարային հաշվեկշռի վիճակը և սույն հոդվածին համապատասխան ընդունված կամ պահպանվող սահմանափակող միջոցները, *inter alia* հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

(a) վճարային հաշվեկշռի դեֆիցիտի բնույթը և էական լինելը.

(b) մյուս Կողմի տնտեսության համար սահմանափակումների հնարավոր ազդեցությունը. և

(c) հասանելի այլընտրանքային այլ շտկող միջոցները:

Խորհրդատվությունների ընթացքում պետք է քննարկվի ՄԱԳՀ 1994-ի XII հոդվածին ցանկացած սահմանափակող միջոցների համապատասխանության հարցը:

Հոդված 16

Մտավոր սեփականության իրավունքի պահպանում

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար մտավոր սեփականությունը նշանակում է մտավոր սեփականություն, ինչպես որ այն սահմանվել է 1967 թվականի հուլիսի 14-ին ստորագրված՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

2. Կողմերն ընդունում են մտավոր սեփականության իրավունքի պահպանման կարևորությունը և կապահովեն մտավոր սեփականության վերաբերյալ միջազգային

համաձայնագրերի, որոնց կողմերն են հանդիսանում իրենք՝ համարժեք և արդյունավետ իրագործումը: Այն Կողմերը, որոնք հանդիսանում են ԱՀԿ համաձայնագրի 1C հավելվածում պարունակվող՝ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի (այսուհետ՝ ԹՐԻՓՍ համաձայնագիր) կողմերը, վերահաստատում են դրանով սահմանված՝ իրենց պարտավորությունները: ԹՐԻՓՍ համաձայնագրի կողմ չհանդիսացող Կողմերը պետք է հետևեն ԹՐԻՓՍ համաձայնագրի սկզբունքներին:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի քաղաքացիների նկատմամբ պետք է կիրառի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որ կիրառում է իր սեփական քաղաքացիների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պահպանության առումով՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի 3-րդ և 5-րդ հոդվածներում նախատեսված դրույթներին և բացառություններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի քաղաքացիների նկատմամբ պետք է կիրառի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը կիրառում է ցանկացած այլ երկրի քաղաքացիների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պահպանության առումով՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի դրույթներին, մասնավորապես՝ դրա 4-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան:

5. Կողմերը պետք է ձգտեն իրենց համապատասխան օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում ապահովել մտավոր սեփականության իրավունքի պահպանման նույն մակարդակ նախատեսող դրույթներ, ինչպիսին նախատեսված է ԹՐԻՓՍ համաձայնագրի 41-ից 50-րդ հոդվածներում այդպիսով թույլ տալով արդյունավետ միջոցների կիրառումը սույն Համաձայնագրում ընդգրկված՝ մտավոր սեփականության իրավունքի ցանկացած խախտման դեպքում: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է անբարեխիղճ մրցակցությունից արդյունավետ պաշտպանություն իր համապատասխան օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերին և Արդյունաբերական սեփականության պահպանության մասին 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն:

6. Կողմերը համագործակցում են մտավոր սեփականության հետ կապված հարցերով: Կողմերից ցանկացածի հարցմամբ, Կողմերը պետք է անցկացնեն փորձագետների խորհրդակցություններ այդպիսի հարցերի շուրջ, մասնավորապես՝ մտավոր սեփականության իրավունքի ներդաշնակեցման, վարչարարության և պաշտպանության վերաբերյալ՝ գոյություն ունեցող կամ ապագա միջազգային կոնվենցիաների առնչությամբ գործունեության վերաբերյալ և ԱՀԿ-ի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության նման միջազգային կազմակերպություններում

գործունեության վերաբերյալ, ինչպես նաև մտավոր սեփականության հարցերով երրորդ կողմերի հետ Կողմերի հարաբերությունների վերաբերյալ հարցերի շուրջ:

7. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտում՝ առևտրի պայմանների վրա ազդող խնդիրների առաջացման դեպքում, Համատեղ կոմիտեում Կողմերից ցանկացածի հարցմամբ կազմակերպվում են տեխնիկական խորհրդատվություններ փոխընդունելի լուծում գտնելու նպատակով: Տեխնիկական խորհրդատվությունները կարող են անցկացվել Կողմերի միջև փոխհամաձայնեցված ցանկացած եղանակով:

Հոդված 17

Պետական առևտրային ձեռնարկություններ

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է իր պետական առևտրային ձեռնարկությունների գործունեության համապատասխանությունը ՄԱԳՀ 1994-ի XVII հոդվածին, դրա պարզաբանող ծանոթագրություններին և ՄԱԳՀ 1994-ի XVII հոդվածի մեկնաբանման վերաբերյալ պայմանավորվածությանը, որոնք սույնով ինկորպորացվում են սույն Համաձայնագրում և կազմում նրա մասը:

Հոդված 18

Հակազնազցման և փոխհատուցման միջոցները

1. Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտում Կողմերին կիրառել հակազնազցման և փոխհատուցման միջոցներ սույն հոդվածին, սույն Համաձայնագրի 20-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան:

2. Կողմերը կիրառում են հակազնազցման և փոխհատուցման միջոցները ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող՝ ՄԱԳՀ 1994-ի VI հոդվածի դրույթներին, ՄԱԳՀ 1994-ի VI հոդվածի կիրառման մասին համաձայնագրին, Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագրին (այսուհետ՝ ՍՓՄ համաձայնագրի) համապատասխան, հաշվի առնելով սույն հոդվածի, սույն Համաձայնագրի 20-րդ և 22-րդ հոդվածների, և սույն Համաձայնագրի «Հիմնադրույթներ հակազնազցման ուսումնասիրությունների ընթացքում նորմալ արժեքի որոշման մասին» 4-րդ հավելվածի դրույթները:

3. Հակազնազցման ուսումնասիրությունների և ցանկացած հետագա հակազնազցման ընթացակարգերի անցկացման նպատակների համար, ներառյալ՝ վերանայումները, Սերբիան դիտարկում է ԵԱՏՄ անդամ պետություններն առանձին և չի կիրառում հակազնազցման միջոցները ընդհանուր առմամբ ԵԱՏՄ-ից ներմուծման նկատմամբ:

4. Փոխհատուցման պարտավորության ուսումնասիրությունների և ցանկացած հետագա փոխհատուցման պարտավորության ընթացակարգերի անցկացման նպատակների համար, ներառյալ՝ վերանայումները, Սերբիան դիտարկում է ԵԱՏՄ անդամ պետություններն առանձին և չի կիրառում փոխհատուցման միջոցները ընդհանուր առմամբ ԵԱՏՄ-ից ներմուծման նկատմամբ, բացառությամբ դեպքերի, երբ առկա են սուբսիդիաներ՝ ՄԱԳՀ 1994-ի XVI հոդվածի և ՍՓՄ համաձայնագրի 1-ին հոդվածի իմաստով, որոնք տրամադրվել են ԵԱՏՄ մակարդակով բոլոր ԵԱՏՄ անդամ պետությունների արտադրողների համար, որոնք յուրահատուկ են ՍՓՄ համաձայնագրի 2-րդ հոդվածի իմաստով և այդպիսի սուբսիդիաների նկատմամբ վերլուծություն է իրականացվում փոխհատուցման պարտավորության ուսումնասիրության անցկացման ընթացքում:

5. Հակազնագցման ուսումնասիրություն կամ փոխհատուցման պարտավորության ուսումնասիրություն սկսելու հնարավորությունը դիտարկող Կողմը գրավոր ձևով ծանուցում է ուսումնասիրություն սկսելու մասին դիմումը ստանալու մասին ոչ ուշ, քան ուսումնասիրություն սկսելու ամսաթվից տասնհինգ (15) օր առաջ:

Հոդված 19

Գլոբալ հատուկ պաշտպանական միջոցներ

1. Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտում Կողմերին կիրառել գլոբալ հատուկ պաշտպանական միջոցներ սույն հոդվածին, սույն Համաձայնագրի 20-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան:

2. Կողմերը կիրառում են գլոբալ հատուկ պաշտպանական միջոցները ՄԱԳՀ 1994-ի XIX հոդվածի դրույթներին և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող՝ Հատուկ պաշտպանական միջոցների մասին համաձայնագրին (այսուհետ՝ պաշտպանական միջոցների համաձայնագրի) համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի, սույն Համաձայնագրի 20-րդ և 22-րդ հոդվածների դրույթները:

3. Գլոբալ հատուկ պաշտպանական ուսումնասիրությունների անցկացման և միջոցների, ինչպես նաև ցանկացած այլ հետագա ընթացակարգերի կիրառման նպատակով, ներառյալ՝ վերանայումները, Սերբիան դիտարկում է ԵԱՏՄ անդամ պետություններն առանձին, և ոչ թե որպես ԵԱՏՄ՝ ընդհանուր առմամբ: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Սերբիայի պարտավորություն՝ սկսել անհատական հատուկ պաշտպանական ուսումնասիրություն ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետության համար:

4. Կողմը, որը մտադիր է կիրառել գլոբալ հատուկ պաշտպանական միջոց, անհապաղ մյուս Կողմին է ուղղում գրավոր ծանուցում, որը պարունակում է ուսումնասիրության

սկզբի, ուսումնասիրության արդյունքում կատարած նախնական և վերջնական եզրահանգումներին վերաբերող ամբողջ անհրաժեշտ տեղեկատվություն:

Հոդված 20 **Խորհրդատվություններ**

Կողմերը կարող են անցկացնել հակազնագցման, փոխհատուցման և գլոբալ հատուկ պաշտպանական միջոցների կիրառման հետ կապված հարցերի շուրջ խորհրդատվություններ՝ Կողմերից յուրաքանչյուրի գրավոր հարցմամբ: Խորհրդատվությունները պետք է անցկացվեն հնարավոր կարճ ժամկետներում, բայց ոչ ուշ, քան այդպիսի գրավոր հարցումը ստանալուց երեսուն (30) օր հետո: Այդպիսի խորհրդատվությունները Կողմերին չեն խոչընդոտում նախաձեռնել հակազնագցման , փոխհատուցման պարտավորության ուսումնասիրություններ կամ գլոբալ հատուկ պաշտպանական ուսումնասիրություններ և չեն դժվարացնում այդպիսի ուսումնասիրությունների անցկացումը:

Հոդված 21 **Երկկողմ պաշտպանական միջոցներ**

1. Եթե սույն Համաձայնագրին համապատասխան մաքսատուրքերի նվազեցման կամ վերացման արդյունքում մի Կողմում ծագող որևէ ապրանքի ներմուծումը, բացառությամբ ապրանքների, որոնց հանդեպ սակագնային քվոտա է սահմանվել սույն Համաձայնագրի N1 «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Սերբիայի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ» հավելվածին և N2 «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Սերբիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային տարածք ներմուծելու ժամանակ» հավելվածին համապատասխան, մյուս Կողմի տարածք իրականացվում է նրա հայրենական արտադրության նկատմամբ բացարձակ արտահայտությամբ կամ հարաբերական արտահայտությամբ այնպիսի ավելացած քանակով և այնպիսի պայմաններով, որ դա հանդիսանում է ներմուծող Կողմում համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքներ արտադրող՝ տնտեսության բնագավառին լուրջ վնասի կամ այդպիսի վնաս պատճառելու էական սպառնալիքի պատճառ, ներմուծող Կողմը կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց, այնպիսի չափով, որն անհրաժեշտ է լուրջ վնասի կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիքի վերացման համար՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Երկկողմ պաշտպանական միջոցը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա են դրական ապացույցներ, որ ավելացած ներմուծումը հանդիսանում է լուրջ վնասի էական պատճառ կամ ստեղծում է լուրջ վնաս պատճառելու սպառնալիք:

3. Սույն հոդվածին համապատասխան երկկողմ պաշտպանական միջոցի կիրառումը դատարկող Կողմը սեղմ ժամկետներում, և, ցանկացած դեպքում՝ մինչև երկկողմ պաշտպանական միջոցի կիրառմանը նախորդող ընթացակարգը սկսելը, ծանուցում է այդ մասին մյուս Կողմին և տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվության հարցում: Կողմերից ցանկացածի հարցման դեպքում, Կողմերն անհապաղ անցկացնում են խորհրդատվություններ փոխընդունելի լուծում գտնելու նպատակով: Եթե փոխընդունելի լուծում չի գտնվել հարցումը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, ներմուծող Կողմը կարող է սկսել ընթացակարգը, որը նախորդում է երկկողմ պաշտպանական միջոցի կիրառմանը:

4. Կրիտիկական հանգամանքներում, երբ հապաղելը կհանգեցնեք վնասի, որը հետագայում դժվար կլինի վերացնել, Կողմը կարող է ընթացակարգը սկսելուց հետո կիրառել նախնական երկկողմ պաշտպանական միջոց՝ այն նախնական եզրակացության հիման վրա, որի համաձայն առկա են ակնհայտ ապացույցներ, որ մյուս Կողմից ծագող ապրանքի ավելացած ներմուծումը հանդիսանում է հայրենական արդյունաբերության լուրջ վնասի կամ այն հասցնելու սպառնալիքի էական պատճառ:

Միջոցը կիրառող Կողմը սեղմ ժամկետներում և ցանկացած դեպքում՝ մինչև նախնական երկկողմ պաշտպանական միջոցի կիրառումը այդ մասին ծանուցում է մյուս Կողմին և տրամադրում է խորհրդատվությունների հնարավորություն: Ծանուցումը պետք է պարունակի ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ ապացույցներ այն մասին, որ մյուս Կողմից ծագող ապրանքի ավելացած ներմուծումը հանդիսանում է լուրջ վնասի կամ այն հասցնելու սպառնալիքի էական պատճառ, համապատասխան ապրանքի ճշգրիտ նկարագրությունը և առաջարկվող նախնական միջոցը, ինչպես նաև դրա ձեռնարկման և կիրառման առաջարկվող ժամկետը: Կողմի հարցմամբ, որը սույն կետին համապատասխան ուղարկվում է ծանուցումը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, Կողմերը անհապաղ անցկացնում են խորհրդատվություններ՝ փոխընդունելի լուծման հասնելու նպատակով: Տվյալ խորհրդատվությունները չեն խոչընդոտում Կողմերին կիրառել նախնական երկկողմ պաշտպանական միջոց:

Ցանկացած նախնական երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի հարյուր ութսուն (180) օրը:

Կողմը կարող է կիրառել նախնական երկկողմ պաշտպանական միջոց՝ համապատասխան ապրանքի համար կիրառվող մաքսատուրքի դրույքաչափի բարձրացման ձևով մինչև անհրաժեշտ մակարդակը, որը չի գերազանցում նախնական

երկկողմ պաշտպանական միջոցի գործողության մեջ դրման պահին առավելագույն բարենպաստության ռեժիմի շրջանակներում գործող մաքսատուրքի դրույքաչափը:

Եթե ընթացակարգը ավարտվում է առանց վերջնական երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման, միջոցը կիրառող Կողմը սեղմ ժամկետներում փոխհատուցում է ցանկացած նախնական երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման արդյունքում վճարված մաքսատուրքը: Այդ դեպքում, Կողմը, որը կիրառել է նախնական պաշտպանական միջոցը, կիրառում է մաքսատուրքի դրույքաչափ, որը կիրառվել է մինչև նախնական երկկողմ պաշտպանական միջոցի ձեռնարկումը, և ընթացակարգի ավարտից հետո երկու (2) տարվա ընթացքում միևնույն ապրանքի հանդեպ ընթացակարգ չի ձեռնարկում:

Ցանկացած նախնական երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը հաշվի է առնվում որպես երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի մի մաս, որը նկարագրվել է սույն հոդվածի 9-րդ կետում:

5. Կողմը, որը մտադրվել է սույն հոդվածին համապատասխան կիրառել վերջնական երկկողմ պաշտպանական միջոց, սեղմ ժամկետներում և ցանկացած դեպքում մինչև վերջնական երկկողմ պաշտպանական միջոցի գործողության մեջ դնելը այդ մասին ծանուցում է մյուս Կողմին և տրամադրում է խորհրդատվությունների անցկացման հնարավորություն: Ծանուցումը պետք է պարունակի ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ ապացույցներ այն մասին, որ մյուս Կողմից ծագող ապրանքի ավելացած ներմուծումը հանդիսանում է լուրջ վնասի կամ այն հասցնելու սպառնալիքի էական պատճառ, համապատասխան ապրանքի ճշգրիտ նկարագրությունը, առաջարկվող վերջնական երկկողմ պաշտպանական միջոցը, սույն հոդվածի 7-րդ կետում նշված փոխհատուցման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև դրա գործողության մեջ դրման առաջարկվող ամսաթիվը, կիրառման հավանական ժամկետը և, համապատասխան դեպքում՝ դրա աստիճանաբար դադարեցման ժամանակացույցը:

Սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան սակագնային քվոտայի բաշխման նպատակների համար, Սերբիան ներառում է ծանուցման մեջ յուրաքանչյուր ԵԱՏՄ անդամ պետության համար առանձին սահմանված համապատասխան ապրանքի ներմուծման ծավալների, տվյալ ներմուծման աճի տեմպերի, ներմուծման մասնաբաժինների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ԵԱՏՄ-ի համար սակագնային քվոտայի չափը, ԵԱՏՄ անդամ պետությունների միջև անհատական ներքվոտային ծավալների նախնական բաշխումը և ցանկացած այլ գործոնները, եթե այդպիսիք կան, որոնք կարող են ազդել Սերբիայի հայրենական արդյունաբերության վրա:

Սույն կետին համապատասխան ծանուցումը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում ուղարկված՝ Կողմերից ցանկացածի հարցմամբ, Կողմերն անհապաղ անցկացնում են խորհրդատվություններ՝ փոխընդունելի լուծման հասնելու համար, ներառյալ՝ փոխհատուցումը: Փոխընդունելի լուծման հասնելու դեպքում, այն ձևակերպվում է գրավոր ձևով և պարտադիր է Կողմերի համար: Եթե Կողմերը չեն գտնում փոխընդունելի լուծում հարցում ստանալու պահից երեսուն (30) օրվա ընթացքում, ներմուծող Կողմը կարող է կիրառել վերջնական երկկողմ պաշտպանական միջոց:

6. Սույն հոդվածի 1-ին կետում սահմանված պայմանները կատարելու դեպքում, ներմուծող Կողմը կարող է կիրառել վերջնական երկկողմ պաշտպանական միջոցը միայն սակագնային քվոտայի ձևով:

Սույն հոդվածի նպատակներով, «սակագնային քվոտա» նշանակում է Կողմերից մեկի տարածքում ծագող ապրանքների որոշված քանակ, որը թույլ է տրվել ներմուծել սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան տրամադրվող ազատ առևտրի ռեժիմի շրջանակներում:

Սակագնային քվոտայից ավել ներմուծվող ապրանքների համար կիրառվող մաքսատուրքի դրույքաչափը ավելանում է մինչև անհրաժեշտ մակարդակ, որը չի գերազանցում վերջնական երկկողմ պաշտպանական միջոցի գործողության մեջ դրվելու պահին առավել բարենպաստության ռեժիմի շրջանակներում գործող մաքսատուրքի դրույքաչափը:

Միջոցը չպետք է կրճատի համապատասխան Կողմի ծագում ունեցող ապրանքի ներմուծման ծավալը՝ միջոցը կիրառող մյուս Կողմի տարածք նախորդ ժամանակահատվածի մակարդակից ցածր, որը համապատասխանում է վերջին երեք (3) տարում ներմուծման միջին ծավալին, որի մասին առկա են վիճակագրական տվյալներ: Մակարդակը որոշվում է սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվան նախորդող ժամանակահատվածում Կողմից ապրանքի ամբողջ ներմուծման և սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածում այն ապրանքի ներմուծման հիման վրա, որի վրա սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան տարածվում է ազատ առևտրի ռեժիմ:

Երկկողմ պաշտպանական միջոցների կիրառման նպատակով, Սերբիան իրականացնում է ներքվոտային ներմուծման անհատական ծավալների բաշխումը և վարչարարությունը բոլոր ԵԱՏՄ անդամ պետությունների համար սակագնային քվոտայի ծավալի սահմաններում (այսուհետ՝ անհատական քվոտա)՝ սույն կետին համապատասխան:

Սերբիան բաշխում է անհատական քվոտան յուրաքանչյուր ԵԱՏՄ անդամ պետության համար հետևյալի հիման վրա.

a) ԵԱՏՄ անդամ արտահանող պետությունից վերջին ներկայացուցչական երեք (3) տարվա ընթացքում, որոնց վերաբերյալ առկա են վիճակագրական տվյալներ, ներմուծման բացակայության դեպքում, կամ եթե ներմուծման ծավալը կազմում է ամբողջ ԵԱՏՄ-ից ընդհանուր ներմուծման ծավալի 5%-ից ոչ ավելին, ԵԱՏՄ անդամ այդպիսի պետությանը հատկացված անհատական քվոտան պետք է կազմի ԵԱՏՄ համար սահմանված սակագնային քվոտայի ծավալի առնվազն 5%,

b) ԵԱՏՄ համար սահմանված սակագնային քվոտայի մնացած ծավալը բաշխվում է Սերբիայի կողմից ԵԱՏՄ մյուս անդամ պետություններին՝ ԵԱՏՄ այդ անդամ պետություններից համապատասխան ապրանքի իր ներմուծման ծավալին համամասնորեն, սույն կետի 4-րդ պարբերությունում նշված ժամանակահատվածում:

c) այն դեպքում, երբ Սերբիան մյուս Կողմից ստանում է տեղեկատվություն այն մասին, որ ԵԱՏՄ անդամ պետությունը շահագրգռված չէ համապատասխան ապրանքի մատակարարումների և քվոտայի բաշխման մեջ, Սերբիան ԵԱՏՄ տվյալ անդամ պետությանը հատկացված անհատական քվոտան ներառում է սույն կետի (b) ենթակետում նշված՝ ԵԱՏՄ համար սահմանված սակագնային քվոտայի մնացած ծավալի մեջ:

ԵԱՏՄ կարող է ներկայացնել ԵԱՏՄ անդամ պետությունների համար անհատական քվոտային ծավալների վերաբաշխման վերաբերյալ առաջարկություններ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան անցկացվող խորհրդապետությունների ընթացքում, ոչ ուշ, քան խորհրդատվության անցկացման հարցումը ստանալուց հետո քսան հինգ (25) օր՝ սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն: Սերբիան կվերաբաշխի ԵԱՏՄ անդամ պետությունների համար անհատական քվոտային ծավալները համաձայն այդ առաջարկների:

7. Կողմին, որը կարող է կրել միջոցի ազդեցությունը, պետք է առաջարկվի փոխհատուցում գիջումների տրամադրման ձևով՝ այն չափով, որը էապես համարժեք է առևտրի նկատմամբ դրա ազդեցության աստիճանին և/կամ այն չափով, որը էապես համարժեք է լրացուցիչ մաքսատուրքերին, որոնք սպասվում են այդ Կողմից ներմուծման նկատմամբ երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման արդյունքում:

Կողմը, սույն հոդվածի 5-րդ կետում նշված խորհրդատվության անցկացման հարցումը ստանալու պահից երեսուն (30) օրվա ընթացքում ուսումնասիրում է տրամադրված տեղեկատվությունը այդ հարցով փոխընդունելի լուծում գտնելը հեշտացնելու նպատակով: Այդպիսի լուծման բացակայության դեպքում ներմուծող Կողմը խնդրի

լուծման համար կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց, և փոխհամաձայնեցված փոխհատուցման բացակայության դեպքում Կողմը, որի ապրանքի նկատմամբ կիրառվում է երկկողմ պաշտպանական միջոցը, կարող է ձեռնարկել փոխհատուցման գործողություն:

Փոխհատուցման գործողության մասին սեղմ ժամկետներում ծանուցվում է մյուս Կողմը՝ փոխհատուցման միջոցի կիրառումից առնվազն երեսուն (30) օր առաջ:

Փոխհատուցման գործողությունը, որպես կանոն կիրառվում է զիջումների տրամադրումը կասեցնելու ձևով, այն չափով, որը էապես համարժեք է առևտրի նկատմամբ դրա ազդեցության աստիճանին և/կամ այն չափով, որը էապես համարժեք է լրացուցիչ մաքսատուրքերին, որոնք սպասվում են երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման արդյունքում:

Փոխհատուցման գործողությունը ձեռնարկվում է միայն առևտրի նկատմամբ էապես համարժեք ազդեցության հասնելու համար անհրաժեշտ նվազագույն ժամկետի ընթացքում և ամեն դեպքում, միայն սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան ընդունված երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման ընթացքում: Փոխհատուցման կամ փոխհատուցման գործողության սահմանման համար հաշվի են առնվում նախնական պաշտպանական միջոցները:

8. Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառմանը նախորդող ընթացակարգը պետք է ավարտվի ինը (9) ամսվա ընթացքում, դրա սկսվելու ամսաթվից սկսած:

9. Երկկողմ պաշտպանական միջոցը կիրառվում է երկու (2) տարուց ոչ ավել ժամկետով: Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման ժամկետը կարող է երկարաձգվել ևս մեկ տարով, եթե առկա են ապացույցներ, որ անհրաժեշտ է վերացնել կամ կանխել լուրջ վնասը կամ այդպիսի վնասի սպառնալիքը և որ տնտեսության բնագավառը հարմարեցվում է: Կողմը երկկողմ պաշտպանական միջոց կրկին չի կիրառում միևնույն ապրանքի նկատմամբ նախկինում կիրառված այդպիսի միջոցի գործողության ժամկետին հավասար ժամկետում:

10. Երկկողմ պաշտպանական միջոցը չի կարող կիրառվել միևնույն ապրանքի նկատմամբ երկու անգամից ավելի:

11. Երկկողմ պաշտպանական միջոցի գործողությունն ավարտվելուց հետո մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է այնպիսի մակարդակի վրա, որը կգործեր միջոցի գործողության ավարտի օրը, եթե միջոցը կիրառված չլիներ:

12. Երկկողմ պաշտպանական միջոցը չի կիրառվում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց պահից առաջին վեց (6) ամսվա ընթացքում:

13. Ոչ մի Կողմ երկկողմ առևտրում չի կիրառում միևնույն ապրանքի նկատմամբ միաժամանակ երկկողմ պաշտպանական միջոց և գլոբալ հատուկ պաշտպանական միջոց:

Հոդված 22

Հաղորդակցություն

1. Կողմերի միջև ցանկացած պաշտոնական հաղորդակցությունը և փաստաթղթերի փոխանակումը այն հարցերով, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագրի 18-ից 22-րդ հոդվածների գործողությունը, իրականացվում են Կողմերի իրավասու մարմինների միջև:

2. Կողմերը տրամադրում են սույն Համաձայնագրի 21-րդ հոդվածի 3-րդ, 5-ից 7-րդ կետերին համապատասխան իրականացրաց ծանուցումների և հարցումների էլեկտրոնային օրինակները այն օրը, երբ ծանուցման կամ հարցման պաշտոնական նամակների թղթային տպագիր օրինակները ուղարկվում են:

3. Կողմերը փոխանակում են տեղեկատվություն իրավասու մարմինների անվանումների և կոնտակտային տվյալների վերաբերյալ, ներառյալ ուսումնասիրություններ անցկացնող մարմինների՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն (30) օրվա ընթացքում: Կողմերն սեղմ ժամկետներում տեղեկացնում են միմյանց՝ իրավասու մարմիններին, ներառյալ՝ ուսումնասիրություն անցկացնող մարմիններին, վերաբերող ցանկացած փոփոխությունների մասին:

Հոդված 23

Վեճերի լուծում

Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանությունից և/կամ կիրառումից բխող ցանկացած վեճ լուծվում է սույն Համաձայնագրի 5-րդ «Վեճերի լուծում» հավելվածով սահմանված կանոններին և ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 24

Թափանցիկություն և տեղեկատվության փոխանակում

1. Յուրաքանչյուր Կողմն իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ապահովում է, որ իր ընդհանուր կիրառման օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև սույն Համաձայնագրի գործողության ոլորտին առնչվող ցանկացած հարցերով համապատասխան միջազգային

համաձայնագրերը ժամանակին հրապարակվեն՝ առնվազն դրանց ուժի մեջ մտնելու պահից, կամ այլ ձևով դրանց հանրային հասանելիության պահից, այդ թվում հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային ձևով:

2. Առավելագույն հնարավորության սահմաններում, Կողմերից յուրաքանչյուրը ծանուցում է մյուս Կողմին ցանկացած միջոցների մասին, որոնք, Կողմի կարծիքով, կարող են զգալիորեն ազդել սույն Համաձայնագրի գործողության վրա կամ որևէ ձևով էապես ազդել մյուս Կողմի շահերի վրա սույն Համաձայնագրի շրջանակներում:

Հոդված 25

Էլեկտրոնային առևտուր

Կողմերն ընդունում են միմյանց միջև առևտրում էլեկտրոնային առևտրի աճող դերը: Սույն Համաձայնագրի՝ ապրանքների առևտրին վերաբերող դրույթներին աջակցելու նպատակով, Կողմերն փոխադարձ շահերից ելնելով համագործակցում են էլեկտրոնային առևտրի ոլորտում:

Հոդված 26

Գաղտնի տեղեկատվություն

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ապահովել սույն Համաձայնագրի շրջանակներում մյուս Կողմի՝ որպես գաղտնի տրամադրած տեղեկատվության գաղտնիությունը:

2. Ոչինչ սույն Համաձայնագրում չի պարտադրում Կողմին տրամադրել կամ թույլատրել մուտքը դեպի այն տեղեկատվությունը, որի բացահայտումը կարող է խոչընդոտել օրենսդրության կիրառմանը, կամ որի բացահայտումը արգելված կամ սահմանափակված է նրա օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, կամ այլ կերպ կհակասի հանրային շահին, կամ կվնասի (ցանկացած տնտեսվարող սուբյեկտի) առանձին մասնավոր կամ պետական ձեռնարկությունների շահերը:

Հոդված 27

Հավելվածներ

Սույն Համաձայնագրի հավելվածները սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 28

Համատեղ կոմիտե

1. Կողմերը սույնով հիմնադրում են յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից կազմված Համատեղ կոմիտե, որի համանախագահները կլինեն մեկական ներկայացուցիչ ԱՏՄ-ից և նրա անդամ պետություններից ներկայացված ի դեմս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամի, և Սերբիայի կառավարությունից՝ ներկայացված նախարարի կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչների մակարդակով: Կողմերը ներկայացվելու են այդ նպատակի համար անհրաժեշտ լիազորություններով օժտված ավագ պաշտոնյաներով:

2. Կողմերը տեղեկացնում են միմյանց Համատեղ կոմիտեի կազմում իրենց ներկայացուցիչների մասին՝ դրա նիստի անցկացման օրվանից առնվազն երեսուն (30) օր առաջ:

3. Համատեղ կոմիտեի խնդիրներն են՝

a) սույն Համաձայնագրի կիրառման և գործողության հետ կապված բոլոր հարցերի դիտանցում և ուսումնասիրում:

b) Կողմերի միջև առևտրային հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունների ուսումնասիրություն:

c) սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխությունների ուսումնասիրում և ներկայացում Կողմերի քննարկմանը. և

d) այլ գործողությունների կատարում, որոնք կապված են սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած հարցի հետ, որը Կողմերը հանձնել են դրան՝ սույն Համաձայնագրի կարգավորման ոլորտի և նպատակների շրջանակներում:

4. Իր գործառույթների կատարման նպատակով, Համատեղ կոմիտեն կարող է հիմնադրել մշտական կամ *ad hoc* ենթակոմիտեներ կամ աշխատանքային խմբեր և դրանց հանձնարարել կոնկրետ հարցերի հետ կապված խնդիրների լուծումը:

5. Համատեղ կոմիտեի բոլոր որոշումներն ու խորհրդատվություններն ընդունվում են Կողմերի կոնսենսուսով:

6. Համատեղ կոմիտեի նիստերը որպես կանոն անցկացվում են առնվազն երկու (2) տարին մեկ անգամ, հաջորդաբար յուրաքանչյուր Կողմի տարածքում, եթե Կողմերի միջև չլինի այլ պայմանավորվածություն:

7. Կարող են անցկացվել նաև հատուկ նստաշրջաններ ցանկացած Կողմի հարցմամբ: Այդպիսի նստաշրջանները հնարավորության սահմաններում պետք է անցկացվեն հարցումը ստանալու ամսաթվից հետո երեսուն (30) օրվա ընթացքում հարցումը կատարած Կողմի տարածքում, եթե Կողմերի միջև չլինի այլ պայմանավորվածություն:

8. Կողմերը կհամաձայնեցնեն Համատեղ կոմիտեի կանոնակարգը և կհաստատեն այն Համատեղ կոմիտեի առաջին նիստին:

Հոդված 29

Կոնտակտային կետեր

1. Սույն Համաձայնագրի արդյունավետ կիրառումն ապահովելու և Կողմերի միջև սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած հարցով հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով, յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից մեկ (1) ամսվա ընթացքում նշանակում է կոնտակտային կետ կամ կոնտակտային կետեր և դրանց մասին ծանուցում է մյուս Կողմին: Կողմերը անհապաղ ծանուցում են միմյանց՝ իրենց կոնտակտային կետերի մասին տվյալների ցանկացած փոփոխությունների մասին:

2. Յուրաքանչյուր Կողմի կոնտակտային կետի գործառույթներն են՝

a) մյուս Կողմից հարցերի կամ հարցադրումների ստացումը.

b) սույն կետի a) ենթակետում նշված հարցերին կամ հարցադրումներին պատասխանելը՝ երբ հնարավոր է՝ համագործակցելով Կողմի մյուս համապատասխան մարմինների հետ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերը չպետք է խոչընդոտեն կամ սահմանափակեն Կողմի գործարար շրջանակների ներկայացուցիչների ցանկացած անմիջական շփումների հաստատումը մյուս Կողմի համապատասխան մարմինների հետ:

4. Կողմի հարցմամբ, մյուս Կողմի կոնտակտային կետը կամ կոնտակտային կետերը նշանակում է այն մարմինը կամ պաշտոնատար անձը, որը պատասխանատու է այնպիսի հարցի համար, որը կարող է ազդեցություն ունենալ Կողմերի միջև առևտրի վրա, և անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերում համապատասխան հաղորդակցությունը հեշտացնելու մեջ:

Հոդված 30

Համաձայնագրի վավերության, դրանից դուրս գալու և գործողության դադարեցման պայմանները

1. Սույն Համաձայնագիրը կնքվել է անորոշ ժամկետով:

2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմին ծանուցելու միջոցով: Սույն Համաձայնագրի գործողության

դադարեցնումն ուժի մեջ է մտնում վերջինը հիշատակված Կողմի կողմից ծանուցումը ստանալու ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա առաջին օրը:

3. Սույն Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության համար, որը դուրս է գալիս ԵԱՏՄ մասին պայմանագրից: ԵԱՏՄ մասին պայմանագրից դուրս եկող ԵԱՏՄ ցանկացած անդամ պետություն *ipso facto* դադարում է սույն Համաձայնագրի կողմ լինել՝ ԵԱՏՄ մասին պայմանագրից դուրս գալը ուժի մեջ մտնելու օրվանից: ԵԱՏՄ գրավոր տեսքով ծանուցում է Սերբիային ցանկացած այդպիսի դուրս գալու մասին, այդպիսի դուրս գալու ուժի մեջ մտնելու օրվանից վեց (6) ամիս առաջ:

Հոդված 31 Փոփոխություններ

1. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

2. Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխությունները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ձևակերպվում են Սույն Համաձայնագրի առանձին արձանագրությունների տեսքով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 33-րդ հոդվածին համապատասխան:

3. Եթե ԱՀԿ համաձայնագրի կամ ցանկացած այլ համաձայնագրի, որի մասնակիցներն են հանդիսանում երկու Կողմերը, ցանկացած դրոյթում, որոնք ինկորպորացվել են սույն Համաձայնագրում, փոփոխություններ են կատարվում, Կողմերն անցկացնում են խորհրդատվություններ՝ սույն Համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխելու անհրաժեշտության մասին:

Հոդված 32 Համաձայնագրին՝ ԵԱՏՄ նոր անդամ պետության միանալը

1. ԵԱՏՄ ցանկացած նոր անդամ պետություն միանում է սույն Համաձայնագրին Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ միացման պայմանների մասին բանակցությունների միջոցով: Այդպիսի միացումը ձևակերպվում է սույն Համաձայնագրի լրացուցիչ արձանագրության միջոցով:

2. ԵԱՏՄ-ը գրավոր տեսքով անհապաղ ծանուցում է Սերբիային ցանկացած երրորդ երկրի՝ ԵԱՏՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակի ստացման մասին, ինչպես նաև ԵԱՏՄ-ին ցանկացած միանալու մասին:

Հոդված 33
Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ԵԱՏՄ, ԵԱՏՄ անդամ պետությունների և Սերբիայի կողմից սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից վաթսուն (60) օր հետո: Ծանուցումները փոխանակվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սերբիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2019 թվականի հոկտեմբերի 25-ին՝ երկու բնօրինակով՝ անգլերեն, ընդ որում՝ երկուսն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կողմից Սերբիայի Հանրապետության կողմից

Բելառուսի Հանրապետության կողմից

Ղազախստանի Հանրապետության կողմից

Ղրղզստանի Հանրապետության կողմից

Ռուսաստանի Դաշնության կողմից

Եվրասիական տնտեսական միության կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Սերբիայի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ

Սույն Հավելվածի նպատակների համար՝

1. «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» և «Նկարագրություն» հասկացությունները վերաբերում են 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սերբիայի Հանրապետության ապրանքային անվանացանկի ապրանքային ծածկագրին և դրա համապատասխան նկարագրությանը:
2. «Հատուկ պայման» նշանակում է ապրանքի ծագման երկիրը, որը ենթակա է հանման ազատ առևտրի ռեժիմից կամ ենթակա է ներմուծման՝ առանց սահմանված սակագնային քվոտաների ծավալով ներմուծման մաքսատուրքի վճարման:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր/հատուկ պայման	Նկարագրություն
1701 99 10 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	Սպիտակ շաքար
2207 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	80% ծավալային բաժին կամ ավելի սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. բնափոխված, ցանկացած խտության էթիլային սպիրտ և այլ սպիրտային թրմօղի
2208 20 12, 2208 20 14, 2208 20 26, 2208 20 27, 2208 20 40, 2208 20 62, 2208 20 64, 2208 20 86, 2208 20 87, 2208 30, 2208 40, 2208 50, 2208 60 91, 2208 60 99, 2208 70, 2208 90 11, 2208 90 19, 2208 90 41, 2208 90 45, 2208 90 48, 2208 90 54, 2208 90 71, 2208 90 75, 2208 90 77, 2208 90 78, 2208 90 91, 2208 90 99 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	80% ծավալային բաժնից ոչ պակաս սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. սպիրտային թրմօղի, լիկյորներ եւ սպիրտային այլ խմիչքներ
ԱՏԳ ԱԱ ծածկագիր/հատուկ պայման	Նկարագրություն

<p>2402 10, 2402 90 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)</p>	<p>Սիգարներ, կտրած ծայրերով սիգարներ, սիգարիլլաներ եւ սիգարետներ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով</p>
<p>4012, բացի 4012 90</p>	<p>Օդաճնշական ռետինե անվադողեր եւ ծածկադողեր՝ վերականգնված կամ օգտագործված</p>
<p>8701 10, 8701 20 10, 8701 30 00, 8701 91 10 10, 8701 91 90, 8701 92 10 11, 8701 92 10 19, 8701 93 10 10, 8701 93 90, 8701 94 10 10 (բացի 90 կվ-ից բարձր հզորության), 8701 94 90, 8701 95 10 10, 8701 95 90 (Ապրանքներ, որոնք ծագում են Ռուսաստանի Դաշնությունից)</p>	<p>Տրակտորներ (բացի 8709 ապրանքային դիրքում դասակարգված տրակտորներից)՝ նոր</p>
<p>8701 20 90, 8701 91 10 90, 8701 92 10 90, 8701 93 10 90, 8701 94 10 90, 8701 95 10 90</p>	<p>Տրակտորներ (բացի 8709 ապրանքային դիրքում դասակարգված տրակտորներից)՝ շահագործված</p>
<p>8702 10 19, 8702 10 99, 8702 20 10 90, 8702 20 90 90, 9702 30 10 90, 8702 30 90 90, 9702 40 00 00-ից, 8702 90 19, 8702 90 39, 8702 90 90 00-ից</p>	<p>Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված տաս կամ ավելի մարդ՝ ներառյալ վարորդին փոխադրելու համար՝ շահագործված</p>
<p>8703</p>	<p>Թեթև մարդատար ավտոմոբիլներ եւ շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ՝ բացառապես նախատեսված մարդկանց փոխադրելու համար (բացի 8702 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցներից)՝ ներառյալ բեռնաուղեւորատար ֆուրգոն-ավտոմոբիլները և մրցարշավային ավտոմոբիլները</p>
<p>8704 21 10, 8704 21 31, 8704 21 91, 8704 22 10, 8704 22 91, 8704 31 10, 8704 31 31, 8704 31 91, 8704 32 10, 8704 32 91 (Ապրանքներ, որոնք ծագում են Ռուսաստանի Դաշնությունից)</p>	<p>Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար՝ նոր</p>
<p>8704 21 39, 8704 21 99, 8704 22 99, 8704 23 99, 8704 31 39, 8704 31 99, 8704 32 99</p>	<p>Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար՝ շահագործված</p>

**Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են սակագնային քվոտաներ
Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Սերբիայի
Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ**

1. Հետևյալ սակագնային քվոտաներն են կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են Եվրասիական տնտեսական միության որոշ անդամ պետություններից՝ համաձայն սույն Հավելվածի: Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետություններից ծագող ապրանքներին տրվում է Սերբիայի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու անմաքս ռեժիմ:
2. Սերբիայի Հանրապետությունը առանց սահմանված ծավալով ներմուծման մաքսատուրքի վճարմամբ ներմուծման հնարավորություն է ընձեռում այն ապրանքների համար, որոնք ծագում են Եվրասիական տնտեսական միության որոշ անդամ պետություններից՝ համաձայն սույն Հավելվածի:
3. Ներմուծման մաքսատուրքերի դրույքչափերը, որոնք կիրառվում են այն ապրանքների ներմուծման ժամանակ, որոնց ծավալները գերազանցում են սույն Հավելվածի համաձայն սահմանված ծավալներից, կիրառվում են Սերբիայի Հանրապետության օրենսդրության և սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր/հատուկ պայման	Նկարագրություն	Անմաքս քվոտայի ծավալ
0406 30 31, 0406 30 39, 0406 30 90 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	հալած պանիրներ, չմամլած կամ չփոշիացրած	տարեկան 100 տոննա
2208 20 29, 2208 20 89 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	սպիրտային թրմօղի, որոնք ստացվել են խաղողի գինու կամ խաղողի կնճեռի թորումից՝ այլ	տարեկան 50 000 լիտր մաքուր սպիրտ (100%)
2402 20 (Ապրանքներ, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից կամ Ղրղզստանի Հանրապետությունից)	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող	Տարեկան 2 000 000 հազար հատ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Սերբիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ

Սույն Հավելվածի նպատակների համար՝

1. «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» և «Նկարագրություն» հասկացությունները վերաբերում են 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի վրա հիմնված ԵԱՏՄ համապատասխան ապրանքային ծածկագրին և դրան համապատասխանող նկարագրությանը՝ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշմամբ:
2. Եվրասիական տնտեսական միությունը առանց ներմուծման մաքսատուրքի վճարմամբ ներմուծման հնարավորություն է ընձեռում այն ապրանքների համար, որոնք ծագում են Սերբիայի Հանրապետությունից՝ սույն Հավելվածի համաձայն սահմանված սակագնային քվոտաների ծավալով:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Նկարագրություն
0207	Ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած
0406 30, բացի 0406 30 100 0	հալած պանիրներ, չմամլած կամ չփոշիացրած
1701 99 100	Սպիտակ շաքար
2204 10	գինիներ փրփրուն
2207	80% ծավալային բաժին կամ ավելի սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. բնափոխված, ցանկացած խտության էթիլային սպիրտ և այլ սպիրտային թրմոլի
2208 20 120 0, 2208 20 140 0, 2208 20 260 0, 2208 20 270 0, 2208 20 400 0, 2208 20 620 0, 2208 20 640 0, 2208 20 860 0, 2208 20 870 0, 2208 30, 2208 40, 2208 50, 2208 60, 2208 70, 2208 90 110 0, 2208 90 190 0, 2208 90 410 0, 2208 90 450 0, 2208 90 540 0, 2208 90 560, 2208 90 690, 2208 90 750 0, 2208 90 770, 2208 90 780, 2208 90 910 0, 2208 90 990 0	80% ծավալային բաժնից ոչ պակաս սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. սպիրտային թրմոլի, լիկյորներ եւ սպիրտային այլ խմիչքներ

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Նկարագրություն
2402 10, 2402 90	Սիգարներ, կտրած ծայրերով սիգարներ, սիգարիլլաներ և սիգարետներ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով
4012, բացառությամբ 4012 90	Օդաճնշական ռետինե անվադողեր և ծածկադողեր՝ վերականգնված կամ օգտագործված
5205	Բամբակե մանվածք (բացի կարի թելերից)՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ դրանից ավելի պարունակությամբ, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված
5208	Բամբակե գործվածքներ՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ դրանից ավելի պարունակությամբ, 200գ/մ ² -ից ոչ ավելի մակերեսային խտությամբ
5209	Բամբակե գործվածքներ՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին. կամ դրանից ավելի պարունակությամբ, 200գ/մ ² -ից ավելի մակերեսային խտությամբ
5210	Բամբակե գործվածքներ՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժնից պակաս պարունակությամբ, հիմնականում կամ բացառապես խառնած քիմիական մանրաթելերի հետ, 200գ/մ ² -ից ոչ ավելի մակերեսային խտությամբ
5211	Բամբակե գործվածքներ՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժնից պակաս պարունակությամբ, հիմնականում կամ բացառապես խառնած քիմիական մանրաթելերի հետ, 200գ/մ ² -ից ավելի մակերեսային խտությամբ
5212	Այլ բամբակե գործվածքներ
58	հատուկ գործվածքներ, թափակար նրբախավով մանածագործական նյութեր, ժանյակներ, որմնագորգեր. դրվագման պարագաներ, ասեղնագործվածքներ

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Նկարագրություն
8414 30, բացի 8414 30 200 1, 8414 30 810 1, 8414 30 890 1	սառնարանային սարքավորումներում օգտագործվող կոմպրեսորներ
8701	Տրակտորներ (բացի 8709 ապրանքային դիրքում դասակարգված տրակտորներից)
8702 10 19, 8702 10 99, 8702 20 19, 8702 20 99, 8702 30 19, 8702 30 99, 8702 40-ից, 8702 90 19, 8702 90 39, 8702 90 80-ից	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ՝ ներառյալ վարորդին փոխադրելու համար՝ շահագործված
8703	Թեթև մարդատար ավտոմոբիլներ և շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ՝ բացառապես նախատեսված մարդկանց փոխադրելու համար (բացի 8702 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցներից)՝ ներառյալ բեռնաուղևորատար ֆուրգոն-ավտոմոբիլները և մրցարշավային ավտոմոբիլները
8704 21 390, 8704 21 990, 8704 22 990, 8704 23 990, 8704 31 390, 8704 31 990, 8704 32 990	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար՝ շահագործված

**Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են սակագնային քվոտաներ
Սերբիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության
մաքսային տարածք ներմուծելու ժամանակ**

1. Հետևյալ սակագնային քվոտաներն են կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են Սերբիայի Հանրապետությունից՝ համաձայն սույն Հավելվածի:
2. Եվրասիական տնտեսական միությունն առանց սահմանված ծավալով ներմուծման մաքսատուրքի վճարմամբ ներմուծման հնարավորություն է ընձեռում այն ապրանքների համար, որոնք ծագում են Սերբիայի Հանրապետությունից՝ համաձայն սույն Հավելվածի:
3. Ներմուծման մաքսատուրքերի դրույքչափերը, որոնք կիրառվում են այն ապրանքների ներմուծման ժամանակ, որոնց ծավալները գերազանցում են սույն Հավելվածի համաձայն սահմանված ծավալներից, կիրառվում են Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների իրավապայմանագրային բազայի և սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն:
4. Եվրասիական տնտեսական միությունն առանց ներմուծման մաքսատուրքի վճարմամբ ներմուծման հնարավորություն է ընձեռում Գլարնյան պանրի համար, որը պատրաստված է մանրացված հոտավետ խոտերի հավելումով, Բուտերկեզե և ոչխարի կամ այծի կաթից պատրաստված պանիրների համար՝ դասակարգված ԱՏԳ ԱԱ 0406 90 690 0, 0406 90 7400, 0406 90 860 0, 0406 90 890 0, 0406 90 920 0, 0406 90 930 0, 0406 90 990 1, 0406 90 990 9 ծածկագրերով: Այս ապրանքների համար առանց ներմուծման մաքսատուրքի վճարմամբ ներմուծման հնարավորություն ընձեռնվում է այն պայմանով, որ ապրանքի ծագման սերտիֆիկատի 8-րդ սյունակում նշված լինի «Glarus cheese with herbs» կամ «Buttercase cheese» կամ «Cheese made of goat's or sheep's milk»:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Նկարագրություն	Անմաքս քվոտայի ծավալ
0406 90 690 0, 0406 90 7400, 0406 90 860 0, 0406 90 890 0, 0406 90 920 0, 0406 90 930 0, 0406 90 990 1, 0406 90 990 9	Այլ պանիրներ	տարեկան 400 տոննա
2208 20 290 0, 2208 20 890 0	սպիրտային թրմօղի, որոնք ստացվել են խաղողի գինու կամ խաղողի կնճեղի թորումից՝ այլ	տարեկան 35 000 լիտր մաքուր սպիրտ (100%)

2402 20	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող	Տարեկան 2 000 000 հազար հատ
---------	-------------------------------	-----------------------------

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 1 Շրջանակը

Ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոնները, որոնք նախատեսված են սույն Հավելվածով, կիրառվում են սակագնային արտոնություններ տրամադրելու նպատակով՝ համաձայն սույն Համաձայնագրի:

Հոդված 2 Հասկացությունները և սահմանումները

Սույն Կանոնների նպատակներով.

- a) «հայտարարատու» - անձ, որը դիմել է արտահանող Կողմի լիազոր մարմինն ապրանքի ծագման երկրի հավաստագիր ստանալու համար, որը հաստատում և պատասխանատվություն է կրում ապրանքի մասին տեղեկությունների հավաստիության համար՝ նշված ապրանքի ծագման հավաստագրում: Հայտարարատու կարող է հանդիսանալ արտադրողը, արտահանողը կամ ապրանքի բեռնառաքիչը, ինչպես նաև դրանց լիազոր ներկայացուցիչները,
- b) «լիազոր մարմին» - մարմին (կազմակերպություն), որին Կողմը լիազորել է տալ (հաստատել) ապրանքի ծագման հավաստագրերը,
- c) «ապրանքի անփոփոխելիության հավաստագիր» - տարանցիկ երկրի մաքսային մարմինների կողմից տրվող փաստաթուղթ, որը վկայում է այն մասին, որ ապրանքները գտնվել են մաքսային վերահսկողության տակ և չեն փոփոխվել կամ չեն ենթարկվել վերամշակման (բացառությամբ ապրանքի պահպանման ապահովման համար գործողությունների) նրա տարածքում,
- d) «ապրանքի ծագման հավաստագիր» - փաստաթուղթ, որը տրված է լիազոր մարմնի կողմից և վկայում է ապրանքի ծագման մասին,
- e) «խմբաքանակ» - ապրանքներ, որոնք մատակարարվում են միաժամանակ մեկ կամ մի քանի ապրանքատրանսպորտային (առաքման) փաստաթղթերով մեկ բեռնառաքիչի կողմից մեկ բեռնաստացողի հասցեով, ինչպես նաև ապրանքներ՝ մեկ փոստային բեռնագրով տեղափոխվող, կամ սահմանը հատող մեկ անձի կողմից՝ որպես ուղեբեռ տեղափոխվող,

- f) «բեռնառաքիչ» - անձ, որը նշված է ապրանքատրանսպորտային (առաքման) փաստաթղթերում, ով համաձայն ստանձնած պարտականությունների փոխանցել է կամ մտադիր է փոխանցել ապրանքները փոխադրողին,
- g) «բեռնաստացող» - անձ, որը նշված է ապրանքատրանսպորտային (առաքման) փաստաթղթերում, ով համաձայն ստանձնած պարտականությունների ստացել է կամ մտադիր է ստանալ ապրանքները փոխադրողից,
- h) «բավարար մշակման (վերամշակման) չափորոշիչ» - ապրանքների ծագման երկրի որոշման չափորոշիչներից մեկը, որի համաձայն ապրանքը, եթե դրա արտադրությանը մասնակցում են երկու կամ ավելի պետություն, համարվում է այն պետությունից ծագած, որի տարածքում ենթարկվել է վերջին էական մշակման (վերամշակման),
- i) «մաքսային արժեք» - արժեք, որը որոշվում է ՄԱԳՀ 1994-ի VII-րդ հոդվածի կիրառման մասին Համաձայնագրով սահմանված դրույթներին համապատասխան,
- j) «ապրանքի ծագման հայտարարագիր» - առևտրային կամ ցանկացած այլ փաստաթուղթ, որը վերաբերում է ապրանքին կամ պարունակում է ապրանքի ծագման մասին հայտարարություն՝ կատարված պատրաստողի, արտահանողի կամ բեռնառաքիչի կողմից;
- k) «արտահանող» - անձ, ով հանդիսանում է արտաքին առևտրի համաձայնագրի (գործարքի) կողմ, որը վաճառում է ապրանքը ներմուծողին:
- l) «գին՝ «ֆրանկո - գործարան» - ապրանքի գին, որը ենթակա է վճարման «ֆրանկո — գործարան» պայմաններով՝ առևտրային տերմինների մեկնաբանության «Ինկոտերմս» միջազգային կանոններին համապատասխան, բացառությամբ ներքին հարկերի գումարների, որոնք հատուցվում են կամ կարող են հատուցվել տվյալ ապրանքի արտահանման ժամանակ: Դա պետք է լինի այն գինը, որը վճարվում է արտադրողին, որը կատարել է վաճառքից առաջ վերջին մշակումը (վերամշակումը),
- m) «ապրանք» - մաքսային սահմանով տեղափոխվող ցանկացած արտադրանք, այդ թվում՝ ջերմային, էլեկտրական, էներգիայի այլ ձևեր և տրանսպորտային միջոցներ (բացառությամբ՝ տրանսպորտային միջոցների, որոնք կատարում են ապրանքների և ուղևորների միջազգային փոխադրումներ), եթե նույնիսկ այն նախատեսված է որպես նյութ այլ արտադրական գործողության մեջ հետագա օգտագործման համար,
- n) «Ներդաշնակեցված համակարգ» - Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին 1983 թվականի հունիսի 14-ի միջազգային կոնվենցիայով սահմանված՝ Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի գործող խմբագրությունը,

- o) «ներմուծող» - անձ, ով հանդիսանում է արտաքին առևտրի համաձայնագրի (գործարքի) կողմ, որը գնում է ապրանքը արտահանողից,
- p) «նյութ» - ցանկացած բաղադրիչ, հումք, բաղադրամաս կամ մաս, որոնք օգտագործվում են ապրանքի արտադրության (պատրաստման) համար,
- q) «օտարերկրյա ծագում ունեցող նյութ» - նյութ, որը չի դիտարկվում որպես ծագող՝ սույն Կանոններին համապատասխան, կամ նյութ, որի ծագումը անհայտ է,
- r) «պատրաստում (արտադրություն)» - ցանկացած տեսակի արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարում, որոնց նպատակն է ապրանքի ստացումը,
- s) երրորդ կողմ – սույն Համաձայնագրի Կողմ չհանդիսացող պետության մաքսային տարածք,
- t) «հավաստիությունը հաստատող մարմին» – իրավասու պետական մարմին, որին Կողմը լիազորել է իրականացնել ապրանքի ծագման հավաստագրերի և ապրանքի ծագման հայտարարագրերի տրման հիմնավորվածության, դրանց մեջ պարունակվող տեղեկությունների հավաստիության հանդեպ հսկողություն, ինչպես նաև պատրաստողների կողմից սույն Կանոններով նախատեսված ապրանքների ծագման չափանիշների կատարման ստուգումներ:

Հոդված 3

Ապրանքների ծագման որոշում

Սույն Կանոնների նպատակների համար ապրանքները համարվում են տվյալ Կողմի ծագման, եթե դրանք.

- a) ամբողջությամբ ստացվել կամ արտադրվել են այդ Կողմում սույն Կանոնների 4-րդ հոդվածին համապատասխան, կամ
- b) արտադրվել են Կողմում օտարերկրյա ծագում ունեցող նյութերի օգտագործմամբ և բավարարում են սույն Կանոնների 5-րդ հոդվածով սահմանված՝ բավարար մշակման (վերամշակման) չափանիշներին,
- c) արտադրվել են մեկ կամ մի քանի Կողմում բացառապես այդ Կողմերի ծագում ունեցող նյութերից, հաշվի առնելով սույն Կանոնների 6-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 4

Ամբողջությամբ ստացված կամ արտադրված ապրանքներ

Հետևյալ ապրանքները պետք է դիտարկվեն որպես ամբողջությամբ ստացված կամ արտադրված Կողմում.

a) օգտակար հանածոներ, հանքային արտադրանք կամ այլ բնական պաշարներ, որոնք արդյունահանվել են Կողմի ընդերքից կամ դրա տարածքային ծովից կամ դրա հատակից կամ ստացվել են երկրի տարածքի մթնոլորտային օդի, ինչպես նաև մթնոլորտային օդի կամ դրա բաժանումից ստացված արտադրանքների վերամշակման արդյունքում,

b) բուսական ծագում ունեցող արտադրանք՝ աճեցված և (կամ) հավաքած Կողմի տարածքում,

c) կենդանի կենդանիներ՝ ծնված և մեծացրած Կողմի տարածքում,

d) արտադրանք՝ ստացված Կողմում կենդանի կենդանիներից,

e) արտադրանք՝ ստացված Կողմի տարածքում որսորդության և ձկնորսության արդյունքում,

f) ծովային ձկնորսության արտադրանք և այլ ծովային արտադրանք՝ որը որսացել են Կողմի տարածքային ծովից դուրս Կողմում հաշվառված կամ գրանցված և դրա դրոշի տակ նավարկող նավերի միջոցով,

g) արտադրանք՝ ստացված տվյալ Կողմի վերամշակող նավի տախտակամածի վրա միայն Կողմից ծագող այն արտադրանքից, որը նշված է սույն հոդվածի f ենթակետում, պայմանով, որ այդ վերամշակող նավը գրանցված կամ հաշվառված է այդ Կողմում և նավարկում է դրա դրոշի տակ,

h) արտադրանք՝ ստացված Կողմի տարածքային ծովից դուրս ծովային հատակից կամ ծովային ընդերքից այն պայմանով, որ տվյալ Կողմն ունի բացառիկ իրավունքներ նշված ծովային հատակի և ծովային ընդերքի շահագործման համար,

i) թափոններ և ջարդոններ (երկրորդական հումք)՝ ստացված Կողմի տարածքում արտադրական կամ այլ վերամշակման գործողությունների կամսպառման արդյունքում, պայմանով, որ դրանք պիտանի են միայն երկրորդական հումքի վերամշակման համար,

j) արտադրանք՝ ստացված բաց տիեզերքում տիեզերանավերի վրա, որոնք պատկանում են Կողմին կամ վարձակալված (պատվիրված) են դրա կողմից,

k) ապրանքներ, որոնք արտադրվել կամ ստացվել են Կողմի տարածքում բացառապես սույն հոդվածի a-j ենթակետերում նշված արտադրանքից:

Հոդված 5

Բավարար մշակման (վերամշակման) չափանիշ

1. Ապրանքը համարվում է Կողմում բավարար մշակման (վերամշակման) ենթարկված, եթե մշակման (վերամշակման) գործընթացում օգտագործված օտարերկրյա ծագում ունեցող նյութերի արժեքը չի գերազանցում արտահանվող ապրանքի արժեքի հիսուն (50) տոկոսը:

2. Մշակման (վերամշակման) ընթացքում օգտագործված օտարերկրյա ծագում ունեցող նյութերի արժեքը սահմանվում է որպես մաքսային արժեք դրանց մշակումը (վերամշակումը) իրականացնելու Կողմ ներմուծելու ժամանակ :

Այն դեպքում, երբ Կողմի օրենսդրությանը համապատասխան, նյութերի մաքսային արժեքը հնարավոր չէ պարզել, և դրանց ծագումը հայտնի չէ, նյութերի արժեքը որոշվում է առաջին պարզված գնի չափով, որը վճարվել է այդ նյութերի համար այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվում է դրանց մշակումը (վերամշակումը):

Կողմից արտահանվող ապրանքի արժեքը որոշվում է «ֆրանկո-գործարան» գնի հիման վրա:

Հոդված 6

Ծագման կումուլացիա

Չնայած սույն Կանոնների 3-րդ հոդվածի «b» ենթակետի դրույթներին, մի Կողմից ծագող ապրանքները կամ նյութերը, որոնք օգտագործվում են մյուս Կողմում ապրանքի արտադրության ընթացքում որպես նյութեր, պետք է դիտարկվեն որպես ծագող այն Կողմից, որտեղ իրականացվել են դրանց վերամշակման վերջին գործողությունները, բացառությամբ այն նյութերի, որոնք նշված են սույն Կանոնների 7-րդ հոդվածի 1-ին կետում: Այդպիսի նյութերի ծագումը հաստատվում է լիազոր մարմնի կողմից տրված ապրանքի ծագման հավաստագրով (CT-2 ձև) :

Հոդված 7

Ոչ բավարար մշակում կամ վերամշակում

1. Ապրանքի բավարար մշակման (վերամշակման) չափանիշին չհամապատասխանող են համարվում հետևյալ գործողությունները.

a) ապրանքի պահպանման գործողություններ, որոնք անհրաժեշտ են պահեստավորման և (կամ) տեղափոխման ժամանակ ապրանքի լավ վիճակում պահպանվածությունն ապահովելու համար ;

b) ապրանքը վաճառքի և (կամ) տեղափոխման համար նախապատրաստելու գործողություններ (խմբաքանակներ բաժանում, առաքման ձևավորում, տեսակավորում, վերափաթեթավորում) փաթեթավորման քանդման և հավաքման գործողություններ;

c) լվացում, մաքրում, փոշու, յուղի, ներկի կամ այլ ծածկույթների հեռացում,

d) արդուկում կամ տեքստիլի մամլում (թելքի և մանվածքի ցանկացած տեսակներ, գործվածքներ ցանկացած թելքից և մանվածքից և արտադրատեսակներ դրանցից),

e) ներկելու, փայլեցնելու, լաքապատելու, յուղով կամ այլ նյութերով ծածկման (տոգորման) գործողություններ,

f) թեփահանում, մասնակի կամ ամբողջական սպիտակեցում, բրնձի և հացահատիկի փայլեցում և հղկում;

g) սառեցում, հալեցում;

h) շաքարը ներկելու, նոսրացնելու կամ խառնելու, այդ թվում՝ այլ նյութերի հետ խառնելու, կամ շաքարը կտորներով ձևավորելու գործողություններ;

i) կեղևահանում, սերմերի, կորիզների հեռացում և մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի կտրատում,

յ) քերում, աղում կամ կտրատում, որը չի հանգեցնում ստացված ապրանքի էական տարբերության սկզբնական բաղադրամասերից,

կ) մաղերով մաղում, տեսակավորում, դասակարգում, ընտրում, հավաքում (այդ թվում՝ արտադրանքների հավաքածուների կազմում),

լ) տարայավորում՝ բանկանների, շշերի, անոթների, պարկերի, արկղերի և տուփերի մեջ և փաթեթավորման այլ գործողություններ,

մ) հավաքման հասարակ գործողություններ կամ ապրանքների մասերի կազմատում,

ն) ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա փորագրության կատարում, ապրանքանիշերի, լոգոների, պիտակների և այլ նման տարբերանշանների գծանշում կամ տպում,

ո) ապրանքների (բաղադրամասերի) խառնում, որը չի հանգեցնում ստացված արտադրանքի էական տարբերության սկզբնական բաղադրամասերից,

բ) կենդանիների սպանդ,

գ) մսի, ձկան կտրատում (տեսակավորում),

ր) ապրանքի՝ ըստ նշանակության օգտագործում (շահագործում), կամ

ս) վերը նշված երկու կամ ավելի գործողությունների համակցում:

2. Եթե այս կամ այն ապրանքի բավարար մշակման (վերամշակման) չափանիշն ապահովվում է բացառապես սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների հաշվին, ապա այդ ապրանքը չի համարվի ծագած այն Կողմից, որտեղ այդ գործողություններն իրականացվել են:

3. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով՝ հասարակգործողություն նշանակում է գործողություն, որի համար չի պահանջվում հատուկ գիտելիքներ(հմտություններ) կամ տվյալ գործողության համար հատուկ նախատեսված մեքենաների, սարքերի և սարքավորումների օգտագործում:

Հոդված 8

Ապրանքի ծագումը որոշելու հատուկ դեպքերը

1. Պարագաները, պահեստային մասերը և գործիքները, որոնք նախատեսված են մեքենաների, սարքավորումների, սարքերի կամ տրանսպորտային միջոցների հետ օգտագործման համար, համարվում են ծագած նույն Կողմից, որտեղից ծագել են մեքենաները, սարքավորումները, սարքերը կամ տրանսպորտային միջոցները, պայմանով, որ տվյալ պարագաները, պահեստային մասերը և գործիքները ներմուծվում և օգտագործվում են վերը նշված մեքենաների, սարքավորումների, սարքերի կամ տրանսպորտային միջոցների հետ միասին և այն քանակությամբ, որքան սովորաբար տվյալ ապրանքի հետ մատակարարվում է տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

2. Փաթեթավորումը, որով ապրանքը ներմուծվում է համարվում է ծագած նույն Կողմից, որտեղից և ապրանքն է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ

Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանության 5-րդ ընդհանուր կանոնին համապատասխան փաթեթավորումը ենթակա է հայտարարագրման՝ ապրանքից առանձին: Այդ դեպքում փաթեթավորման ծագումը որոշվում է ապրանքի ծագման երկրից առանձին:

3. Եթե փաթեթավորումը, որով ապրանքը ներմուծվում է համարվում է ծագած նույն Կողմից, որտեղից և ապրանքն է, ապա ապրանքի ծագման երկրի որոշման նպատակով հաշվի է առնվում միայն այն փաթեթավորումը, որով ապրանքը սովորաբար սպառվում է մանրածախ առևտրում:

4. Ապրանքների ծագումը որոշելու ժամանակ՝ կազմատած կամ չհավաքված տեսքով ապրանքները, ինչպես նաև լիրքով տեղափոխվող, առանձին մասերով մատակարարվող ապրանքները, որոնք արտադրական սահմանափակումներից կամ տրանսպորտային պայմաններից ելնելով հնարավոր չէ մատակարարել մեկ խմբաքանակով, հայտարարատուի ցանկությամբ կարող են դիտարկվել որպես միասնական ապրանք, պայմանով, որ բոլոր բաղադրամասերը մատակարարվում են նույն մաքսային տարածքից նույն արտահանողի կողմից նույն ներկրողի համար մեկ գործարքի շրջանակներում, և պայմանով, որ պահպանվում են ներմուծող Կողմի մաքսային օրենսդրությամբ սահմանված մյուս բոլոր պայմանները:

5. Ապրանքների ծագման երկրի որոշման համար հաշվի չեն առնվում ապրանքի արտադրության համար օգտագործվող ջերմային և էլեկտրական էներգիայի, մեքենաների, սարքավորումների և գործիքների, ինչպես նաև այլ այնպիսի ապրանքների ծագումը, որոնք ներառված չեն վերջնական ապրանքների բաղադրության մեջ, բայց որոնց օգտագործումը նման ապրանքների արտադրության մեջ կարող է ներկայացվել որպես այդ արտադրական գործընթացի մի մաս:

6. Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանության 3-րդ ընդհանուր կանոնին համապատասխան որպես հավաքածուներ դասակարգվող ապրանքները դիտարկվում են որպես ծագող, եթե հավաքածում կազմող բոլոր բաղադրամասերը համարվում են ծագող նյութեր: Այնուամենայնիվ, եթե հավաքածում կազմված է ինչպես ծագող, այնպես էլ օտարերկրյա ծագում ունեցող բաղադրամասերից, ապա այն համարվում է ծագող, պայմանով, որ օտարերկրյա ծագում ունեցող բաղադրամասերի արժեքը չի գերազանցում հավաքածուի՝ «ֆրանկո-գործարան» պայմաններով արժեքի տասնհինգ (15) տոկոսը:

Հոդված 9

Անմիջական մատակարարումը

1. Անմիջական մատակարարում է համարվում մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ապրանքների տեղափոխումը՝ առանց երրորդ կողմի տարածքով տարանցման:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին, ապրանքները կարող են տեղափոխվել երրորդ կողմերի տարածքներով աշխարհագրական, տրանսպորտային, տեխնիկական կամ տնտեսական պատճառներով, պայմանով, որ այդպիսի տեղափոխման ժամանակ, այդ թվում՝ այդ երրորդ կողմերի տարածքներում ժամանակավոր պահեստավորման ընթացքում, ապրանքները գտնվեն մաքսային հսկողության (վերահսկողության) տակ:

3. Արտահանողը ներմուծող Կողմի մաքսային մարմիններին պետք է ներկայացնի սույն հոդված 2-րդ կետում սահմանված պայմանների կատարումն հաստատող համապատասխան փաստաթղթային ապացույցներ: Այդպիսի ապացույցները ներմուծող Կողմի մաքսային մարմիններին է տրամադրվում հետևյալ փաստաթղթերից մեկի ներկայացմամբ.

a) ապրանքի անփոփոխելիության հավաստագիր՝ տրված տարանցիկ երրորդ կողմի մաքսային մարմինների կողմից,

b) երրորդ կողմի մաքսային մարմինների կողմից տրված այլ փաստաթղթեր, որոնք ներկայացնում են ապրանքների ճշգրիտ նկարագրությունը, ապրանքների փոխաբեռնման (տրանսֆերի) ամսաթվերը և տրանսպորտային միջոցների անվանումները, ինչպես նաև հավաստում են այն պայմանները, որոնցում ապրանքները գտնվել են այդ տարանցիկ երրորդ երկրում,

c) երրորդ կողմի մաքսային մարմինների կողմից հավաստված տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք հաստատում են արտահանող Կողմից այդ տարանցիկ երրորդ կողմի տարածքով տարանցմամբ ապրանքների տեղափոխման երթուղին:

4. Անմիջական մատակարարմանն են համապատասխանում նաև այն ապրանքները, որոնք ներմուծողը գնել է ցուցահանդեսներից կամ տոնավաճառներից, հետևյալ պայմաններով.

a) ապրանքները մատակարարվել են մի Կողմի տարածքից երրորդ Կողմի տարածք, որտեղ անցկացվել է ցուցահանդեսը կամ տոնավաճառը, և դրանց անցկացման ժամանակ գտնվել են մաքսային հսկողության (վերահսկողության) տակ,

b) ցուցահանդես կամ տոնավաճառ ուղարկվելու պահից ապրանքները չեն օգտագործվել ցուցադրման նպատակներից բացի որևէ այլ նպատակներով,

c) ապրանքները ներմուծվում են Կողմի տարածք նույն վիճակում, որում դրանք ուղարկվել էին երրորդ կողմի տարածք, չհաշված բնական մաշվածության հետևանքով ապրանքների վիճակի փոփոխությունը կամ տեղափոխման և պահեստավորման նորմալ պայմաններում կորուստը:

Հոդված 10

Ազատ առևտրի ռեժիմի տրամադրման պայմանները

1. Ապրանքը Կողմերի տարածքներում օգտվում է ազատ առևտրի ռեժիմից, եթե այն համապատասխանում է ծագման չափանիշներին՝ սահմանված սույն Կանոններով, ինչպես նաև միաժամանակ համապատասխանում է հետևյալ պայմաններին՝

a) ներմուծող Կողմի մաքսային մարմինն ներկայացվել է ապրանքի ծագման մասին վավեր և պատշաճորեն լրացված հավաստագիր (CT-2 ձև) կամ սույն Կանոնների 13-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ սույն Կանոններում սահմանված պահանջներին համապատասխան ձևակերպված ապրանքի ծագման մասին հայտարարագիր, բացառությամբ սույն Կանոնների 14-րդ հոդվածում նախատեսված հանգամանքերի,

b) պահպանվել են սույն Կանոնների 9-րդ հոդվածով նախատեսված՝ ապրանքների անմիջական մատակարարումների պայմանները,

c) կատարվել են սույն Կանոնների 15-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական համագործակցության վերաբերյալ պահանջները:

2. Ապրանքները, որոնց ծագումը չի պարզվել կամ որոնց ծագումը պարզվել է, սակայն այդ ապրանքների նկատմամբ ազատ առևտրի ռեժիմ տրամադրվել չի կարող, ներմուծվում են ներմուծող Կողմ այդ Կողմի մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման պահանջներին համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ Կողմերի տարածքներում կարող է տրամադրվել ազատ առևտրի ռեժիմ ապրանքների բաց թողումից հետո, պայմանով, որ.

a) կատարվել են սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանները,

b) ներմուծող Կողմում մաքսային հայտարարագրի գրանցումից հետո տասներկու (12) -ամսյա ժամկետը չի լրացել:

4. Ապրանքների բացթողումից հետո ազատ առևտրի ռեժիմ տրամադրվում է սույն Կանոններով սահմանված պայմաններով և ներմուծող Կողմի մաքսային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան:

5. Ազատ առևտրի ռեժիմը չի կարող տրամադրվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) կամ ապրանքի ծագման հայտարարագրի կեղծում հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ կետում նշված պայմանները չկատարելու դեպքում:

Հոդված 11

Ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը մերժելու հիմքերը

1. Կողմի Մաքսային մարմինը մերժում է մյուս Կողմից ներմուծվող ապրանքների նկատմամբ ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը հետևյալ դեպքերում.

a) չի կատարվել սույն Կանոնների 10-րդ հոդվածի 1-ին կետում նշված ազատ առևտրի ռեժիմի տրամադրման պայմաններից մեկը (կամ մի քանիսը),

b) ապրանքի ծագման հավաստագրում (CT-2 ձև) (ապրանքի ծագման հայտարարագրում) նշված ապրանքը հնարավոր չէ նույնացնել մաքսային հայտարարագրում նշված ապրանքի հետ:

c) արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) (ապրանքի ծագման մասին հայտարարագիրը) չի տրվել (կեղծվել է), չեղյալ է համարվել (հետ է կանչվել) կամ տրվել է ոչ վավեր, սխալ կամ ոչ լիարժեք փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հիման վրա,

d) սույն Կանոնների 15-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված հարցումն ուղարկելուց հետո վեց (6) ամսվա ընթացքում (կամ այդպիսի հարցման օրվանից ութ (8) ամսվա ընթացքում, եթե արտահանող Կողմը սույն Կանոնների 15-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան դիմել է վերիֆիկացիայի անցկացման ժամկետի երկարաձգման համար) արտահանման երկրի վերիֆիկացիայի մարմնի կողմից արանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) (արանքի ծագման մասին հայտարարագրի) մասին պատասխանը չի ստացվել կամ եթե առկա է սույն Կանոնների 15-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպք,

e) մատակարարված արանքների փաստացի քաշը գերազանցում է արանքի ծագման հավաստագրում (CT-2 ձև) (արանքի ծագման հայտարարագրում) նշվածը քաշը ավելի քան հինգ (5) տոկոսով,

f) արանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) թղթային տարբերակի բնօրինակը ներմուծող Կողմի մաքսային մարմնի պահանջով չի ներկայացվել սույն Կանոնների 13-րդ հոդվածի 4-րդ կետով և 14-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերում,

g) սույն Կանոնների 16-րդ հոդվածին համապատասխան իրականացված արտազնա ստուգումը թույլ չի տալիս պարզել արանքների ծագումը կամ վկայում է արանքների՝ ծագման չափանիշներին չհամապատասխանելու մասին,

h) սույն Կանոնների 16-րդ հոդվածի 2-րդ կետում նշված արտազնա ստուգման մասին հարցումը ուղարկելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնից գրավոր համաձայնությունը չի ստացվել կամ ստացվել է արտազնա ստուգումն անցկացնելու մերժում:

2. Արանքի ծագման հավաստագրում (CT-2 ձև) (արանքի ծագման հայտարարագրում) լրացման ժամանակ թույլ տրված սխալների (վրիպակների) և (կամ) աննշան տարբերությունների առկայությունը, որոնք չեն ազդում այդ արանքի ծագման հավաստագրում (CT-2 ձև) (արանքի ծագման հայտարարագրում) պարունակվող տեղեկությունների հավաստիության և լիարժեք լինելու վրա, ինչպես նաև կասկածի տակ չեն դնում արանքների ծագումը՝ հիմք չեն հանդիսանում ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը մերժելու համար:

Հոդված 12

Արանքի ծագման մասին հավաստագիր

1. Ազատ առևտրի ռեժիմ ստանալուն պատակով արանքների ծագումը հաստատելու համար ներմուծող Կողմի մաքսային մարմնին ներկայացվում է արանքի ծագման հավաստագիր (CT-2 ձև)՝ սույն Կանոնների N 1 Հավելվածում նախատեսված ձևով և պատշաճորեն լրացված սույն հոդվածում և սույն Կանոնների 18-րդ հոդվածում նշված պահանջներին համապատասխան:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմնին ներկայացված ծագման հավաստագիրը (CT-2 ձև) պետք է լինի բնօրինակը և թղթային տարբերակով,

բացառությամբ սույն Կանոնների 14-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի:

3. Ծագման հավաստագիրը (CT-2 ձև) տրվում է լիազոր մարմնի կողմից հայտատուի դիմումի (ներա կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկությունների) հիման վրա՝ ապրանքների արտահանումից առաջ կամ արտահանման պահին բոլոր դեպքերում, երբ ապրանքները համապատասխանում են սույն Կանոնների պահանջներին:

4. Ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) տրվում է ապրանքի մեկ խմբաքանակի համար և ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակներով վավեր է լիազոր մարմնի կողմից ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) տրման օրվանից տասներկու (12) ամիս ժամկետով:

5. Մատակարարված ապրանքի փաստացի քաշը չպետք է գերազանցի ապրանքի ծագման մասին հավաստագրում նշված քաշն ավելի քան հինգ (5) տոկոսով:

6. Ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) կարող է լիազոր մարմնի կողմից տրվել նաև ապրանքների արտահանումից հետո՝ հայտատուի դիմումի հիման վրա: Այդ դեպքում, հայտատուն լրացուցիչ ներկայացնում է լիազորված մարմնին մաքսային հայտարարագիր, որտեղ մաքսային մարմինը կատարել է ապրանքների փաստացի արտահանումը հաստատող հատուկ նշում: Մաքսային մարմնի նշումի ամսաթիվը պետք է լինի ավելի վաղ, քան ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) տրման ամսաթիվը:

Արանքների՝ էլեկտրոնային ձևով մաքսային հայտարարագրման դեպքում կարող է ներկայացվել սահմանը հատելու մասին մաքսային մարմնի էլեկտրոնային ծանուցումը: Այն դեպքում, երբ Կողմի տարածքից ապրանքի արտահանման ժամանակ մաքսային հայտարարագրում չի կիրառվում, լիազոր մարմնին ներկայացվում են փաստաթղթեր, որոնք հաստատում են այդ Կողմից ապրանքի հանձնումը:

Այս դեպքում ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) 5-րդ սյունակում նշվում է՝ «Issued retrospectively» կամ «Выдан впоследствии»:

7. Ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) կորելու կամ վնասվելու դեպքում լիազոր մարմնի կողմից տրվում է դրա պաշտոնապես հաստատված կրկնօրինակը: Կրկնօրինակի տրամադրման դեպքում 12-րդ սյունակում «Certification» («Удостоверение») նշվում է կրկնօրինակի տրամադրման ամսաթիվը, իսկ 5-րդ սյունակում «For official use» («Для служебных отметок») նշվում է «Duplicate» կամ «Дубликат» բառը, ինչպես նաև կորցրած կամ վնասված ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) բնօրինակի համարը և տրման ամսաթիվը: Ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) կրկնօրինակը վավեր է Ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) բնօրինակի տրամադրման օրվանից: Ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) կրկնօրինակի վավերականության ժամկետը՝ ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակով, չի կարող գերազանցել ապրանքի ծագման

հավաստագրի (CT-2 ձև) բնօրինակի տրամադրման օրվանից տասներկու (12) ամիսը:

8. Ինչ որ պատճառով չեղյալ համարված ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) փոխարեն, կամ նախկինում տրված ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում, հայտատուի կողմից ներկայացված հիմնավորված հայտի հիման վրա լիազոր մարմինը կարող է տրամադրել նոր ապրանքի ծագման հավաստագիր (CT-2 ձև): Այդ դեպքում 5-րդ սյունակում կատարվում է գրանցում. «Issued instead of certificate form CT-2» կամ «Выдан взамен сертификата формы», որտեղ նշվում է չեղյալ համարված (վերաձևակերպված) ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) համարը և տրման ամսաթիվը: Այլ ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) փոխարեն տրված ապրանքի ծագման հավաստագրին (CT-2 ձև) տրվում է նոր գրանցման համար:

9. Այն դեպքում, երբ Կողմերի միջև տեղափոխվում են այնպիսի ապրանքներ, որոնք չեն ենթարկվել մշակման (վերամշակման), բացառությամբ՝ ապրանքների պահպանման և փաթեթավորման գործողությունների, ինչպես նաև դրանք վաճառքի և տեղափոխման համար նախապատրաստելու գործողությունների, Կողմի լիազոր մարմինը կարող է տալ ապրանքի ծագման հավաստագրին (CT-2 ձև) փոխարինող հավաստագիր:

Ապրանքի ծագման փոխարինող հավաստագիրը (CT-2 ձև) տրվում է ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) հիման վրա, որը տրվել է այն Կողմի լիազոր մարմնի կողմից, որի տարածքից այդ ապրանքները արտահանվել են մյուս Կողմի տարածք և հաստատում է այդ ապրանքի ծագման հավաստագրում (CT-2 ձև) նշված ծագման երկիրը:

Այս դեպքում 5-րդ սյունակում նշվում է «Issued on the basis of certificate form CT-2» կամ «Выдан на основании сертификата формы CT-2» գրանցումը՝ միաժամանակ նշելով արտահանող Կողմում տրված՝ ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) համարը և ամսաթիվը, ինչպես նաև այդ հավաստագիրը տված լիազոր մարմինը:

10. Ապրանքի ծագման հավաստագիրը (CT-2 ձև) տված լիազոր մարմինը, ինչպես նաև հայտատուն պահում են Ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) պատճենը և դրա հետ կապված ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ հայտատուի կողմից ներկայացվածները, այդպիսի հավաստագրի տրման օրվանից առնվազն երեք (3) տարի:

Հոդված 13

Ապրանքի ծագման մասին հայտարարագիր

1. Ապրանքների փոքր խմբաքանակների ծագումը հաստատելու համար, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում հինգ հազար (5000) եվրոյին համարժեք գումարը, ազատ առևտրի ռեժիմից իրավունք ստանալու համար չի պահանջվում ներմուծող Կողմի մաքսային մարմնին ներկայացնել ապրանքի ծագման մասին հավաստագիր (CT-2 ձև): Այդ դեպքում կարող է ներկայացվել

ապրանքի ծագման մասին հայտարարագիր՝ ձևակերպված սույն Կանոնների N 2 Հավելվածում բերված պահանջներին համապատասխան:

2. Ազատ առևտրի ռեժիմի տրամադրման համար ապրանքի ծագման մասին հայտարարագրի վավերականության ժամկետը չպետք է գերազանցի արտադրողի, արտահանողի կամ բեռնառաքիչի կողմից այն ստորագրելու օրվանից հաշված տասներկու (12) ամիսը:

3. Մատակարարված ապրանքի փաստացի քաշը չպետք է գերազանցի ապրանքի ծագման մասին հայտարարագրի մեջ նշված քաշն ավելի քան հինգ (5) տոկոսով:

4. Այն դեպքում, երբ ներմուծող Կողմի մաքսային մարմինն ապացույցներ ունի, որ ապրանքի ծագման մասին հայտարարագրում նշված՝ ապրանքի ծագման մասին տեղեկությունները կարող են հավաստի չլինել, ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է պահանջել ներկայացնել ապրանքի ծագման հավաստագիրը (CT-2 ձև)՝ թղթային տարբերակով:

5. Արտադրողը, արտահանողը կամ բեռնառաքիչը, որոնք ապրանքի ծագման մասին հայտարարագրում ապրանքի ծագման երկրի մասին հայտարարություն են արել, պետք է արտահանող կողմի վերիֆիկացիայի մարմնի պահանջով ներկայացնեն բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են սույն Կանոններին համապատասխան ապրանքների ծագումը հաստատելու համար:

6. Արտադրողը, արտահանողը կամ բեռնառաքիչը պետք է պահեն ապրանքի ծագման հայտարարագրի պատճենը, ինչպես նաև դրա հետ կապված բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են ապրանքների ծագումը, այն ստորագրելու օրվանից առնվազն երեք (3) տարի:

7. Ապրանքի ծագման հայտարարագիրը պետք է լինի թղթային տարբերակով և լինի արտադրողի, արտահանողի կամ բեռնառաքիչի լիազորված ներկայացուցչի կողմից անձամբ ստորագրված՝ նրա անվան և ազգանվան նշմամբ:

Հոդված 14

Դեպքեր, երբ ծագման փաստաթղթային հաստատում չի պահանջվում

1. Ապրանքի ծագման մասին հավաստագրի կամ ապրանքի ծագման մասին հայտարարագրի կամ ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) ներկայացում ազատ առևտրի ռեժիմից օգտվելու իրավունք ստանալու համար չի պահանջվում այն ծագող ապրանքների բեռների ներմուծման ժամանակ, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր (200) եվրոյին համարժեք գումարը, պայմանով, որ այդ ներմուծումը չի հանդիսանում մի քանի խմբաքանակի մաս, որը հիմնավորված ձևով կարող է դիտարկվել որպես ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) կամ ապրանքի ծագման հայտարարագրի տրամադրումից խուսափելու նպատակով ձեռնարկված կամ կազմակերպված միջոց:

2. Սույն Կանոնների 17-րդ հոդվածում նշված՝ «Ապրանքների ծագման հավաստագրման և վերիֆիկացիայի էլեկտրոնային համակարգի» (այսուհետ՝ ԱԾՀՎԷՀ) մշակման և ներդրման դեպքում, ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) թղթային տարբերակի բնօրինակը կարող է չներկայացվել: Այդ դեպքում այդպիսի ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) ամսաթիվը և համարը պետք է նշվեն մաքսային հայտարարագրում:

3. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինը ունի հիմնավորված կասկած այն ապրանքի ծագման վերաբերյալ, որի համարակնկալվում է ազատ առևտրի ռեժիմ և (կամ) ԱԾՀՎԷՀ-ում պարունակվող տեղեկատվության մեջ հայտնաբերվել է անհամապատասխանություն, կամ ԱԾՀՎԷՀ-ում համապատասխան տեղեկատվությունը առկա չէ, ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է պահանջել ներկայացնել ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) թղթային տարբերակի բնօրինակը:

Հոդված 15

Վարչական համագործակցություն

1. Մինչև սույն Կանոններին համապատասխան ապրանքի ծագման մասին հավաստագրերի (CT-2 ձև) տալը Կողմերը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սերբիայի Հանրապետության Ֆինանսների նախարարության – Մաքսային վարչության միջոցով միմյանց տրամադրում են համապատասխանաբար.

1) ապրանքի ծագման մասին հավաստագրերի (CT-2 ձև) նմուշներ և ապրանքի ծագման մասին հավաստագրերի (CT-2 ձև) լրացուցիչ ձևաթղթեր, ներառյալ ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) պաշտպանության առանձնահատկությունների մասին տեղեկություններ

2) լիազոր մարմինների կնիքների արտատիպերով (արտատիպերը պետք է լինեն ինքնօրինակ և հստակ, որպեսզի հնարավոր լինի կատարել դրանց միանշանակ նույնականացումը՝ իսկական լինելը պարզելու համար),

3) լիազոր մարմինների անվանման և հասցեի մասին տեղեկատվություն,

4) վերիֆիկացիայի մարմինների անվանման և հասցեի մասին տեղեկատվություն,

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված նմուշների և տեղեկատվության ցանկացած փոփոխությունների մասին պետք է նույն կարգով նախօրոք ծանուցվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովը և Սերբիայի Հանրապետության Ֆինանսների նախարարությունը – Մաքսային վարչությունը:

Այդպիսի ծանուցումը պետք է պարունակի տեղեկատվություն Կողմի լիազոր մարմնի կողմից նոր կնիքների օգտագործումը սկսելու ամսաթիվի մասին, ինչպես նաև այն կնիքների մասին (որոնց արտատիպը տրամադրվել էր նախկինում) որոնց փոխարեն կամ ի լրացում որոնց պետք է օգտագործվեն դրանք: Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված տեղեկատվության փոխանակումը պետք է իրականացվի անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

3. Առանց սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված տեղեկատվության տրամադրման և (կամ) սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված պահանջներին չհամապատասխանող տեղեկատվության տրամադրման դեպքում, ներմուծվող ապրանքների հանդեպ ազատ առևտրի ռեժիմ չի տրամադրվում:

4. Կողմերի մաքսային մարմիններն իրականացնում են ապրանքի ծագման մասին հավաստագրերի (CT-2 ձև) և ապրանքի ծագման մասին հայտարարագրերի հետագա վերիֆիկացիան ընտրովի հիմքերով կամ այդ փաստաթղթերի իսկության կամ դրանցում պարունակվող տեղեկությունների հավաստիության մասին մաքսային մարմինների մոտ հիմնավոր կասկածի առկայության դեպքում:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում, ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է վերիֆիկացիայի մարմնին ուղղել հիմնավորված հարցում՝ խնդրելով հաստատել ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) (ապրանքի ծագման մասին հայտարարագրի) և (կամ) դրանցում պարունակվող տեղեկությունների իսկությունը, ինչպես նաև տրամադրել լրացուցիչ կամ հստակեցնող տեղեկություններ, այդ թվում՝ ապրանքների ծագման չափանիշի կատարման մասին և (կամ) ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) տրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները, ներառյալ երրորդ կողմում տրամադրված առևտրային փաստաթղթերի (գրառումներ, ինվոյսներ, պայմանագրեր և այլն) պատճենները:

Վերիֆիկացիայի վերաբերյալ հարցմանը կից ներկայացվում է ստուգվող ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) (ապրանքի ծագման մասին հայտարարագրի) պատճենը:

Վերիֆիկացիայի վերաբերյալ հարցումն իրականացվում է անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

Վերիֆիկացիայի հարցման մեջ նշվում են այն ուղղելու պատճառները և (կամ) այլ լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) (ապրանքի ծագման հայտարարագրի) որ տեղեկությունները կարող են լինել ոչ հավաստի, բացառությամբ դեպքերի, երբ վերիֆիկացիան անցկացվում է ընտրովի հիմքով:

6. Ներմուծող Կողմի մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան վերիֆիկացիայի մարմնին հարցումը ուղղվելու դեպքում, վերիֆիկացիան պետք է իրականացվի վերիֆիկացիայի մարմնի կողմից հնարավորինս կարճ ժամկետում և դրա արդյունքների մասին տեղեկատվությունը, ներառյալ ամբողջ պահանջված տեղեկատվությունը, պետք է ուղարկվի հարցումն ուղղած մաքսային մարմնին հարցման ամսաթվից վեց (6) ամսվա ընթացքում:

Բացառիկ դեպքերում արտահանող Կողմը կարող է դիմել հարցումն ուղղած ներմուծող Կողմի մաքսային մարմնին երկու (2) ամսով վերիֆիկացիայի հարցմանը պատասխանելու ժամկետը երկարաձգելու մասին հիմնավորված խնդրանքով: Այդպիսի հարցումը պետք է ուղղվի սույն կետի առաջին պարբերությունում նշված վեց (6) ամսվա ընթացքում:

Վերիֆիկացիայի արդյունքները պետք է հստակ ցույց տան՝ արդյոք փաստաթղթերն իսկական են և արդյոք կոնկրետ ապրանքները կարող են դիտարկվել որպես Կողմից ծագող ապրանքներ, ինչպես նաև կատարվում են արդյոք սույն Կանոնների պահանջները:

Ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) չեղյալ համարելու կամ ապրանքի ծագման մասին հայտարարագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում, արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինն այդպիսի որոշման մասին հնարավորինս կարճ ժամկետում տեղեկացնում է ներմուծող Կողմի մաքսային մարմին:

7. Ներմուծող Կողմի մաքսային մարմինը պետք է վերիֆիկացիայի վերաբերյալ հարցման պատճենն ուղարկի արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինն պաշտոնապես, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով, օգտագործելով սույն կետի երրորդ պարբերությունում նշված ընթացակարգին համապատասխան ստացած հասցեները:

Արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինն անհապաղ հաստատում է էլեկտրոնային փոստով ստացված այդպիսի հարցման ստացումը՝ հարցումն ուղարկած ներմուծող Կողմի մաքսային մարմին:

Կողմերի մաքսային մարմինները և վերիֆիկացիայի մարմինները տեղեկատվություն են փոխանակում հաղորդակցության եղանակի և էլեկտրոնային հասցեների մասին, որոնք օգտագործվելու են սույն Կանոններին համապատասխան վերիֆիկացման ընթացակարգերի շրջանակներում տվյալների փոխանակման ժամանակ:

8. Ազատ առևտրի ռեժիմը չի տրամադրվում, եթե վերիֆիկացիայի արդյունքները թույլ չեն տալիս պարզել ապրանքի ծագման հավաստագրերի (CT-2 ձև) (ապրանքի ծագման հայտարարագրերի) իսկությունը և դրանցում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև այն դեպքում, եթե չեն ներկայացվել լրացուցիչ կամ պարզաբանող տեղեկություններ, այդ թվում՝ ապրանքների ծագման չափանիշի համապատասխանության վերաբերյալ, փաստաթղթերի պատճեններ, այդ թվում՝ որոնց հիման վրա տրամադրվել է ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև):

Հոդված 16

Արտազնա ստուգում

1. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինը բավարարված չէ սույն Կանոնների 15-րդ հոդվածում նշված վերիֆիկացիայի արդյունքներովնա կարող է բացառիկ դեպքերում հայցել արտահանող կողմկատարել արտազնա ստուգման այց՝ սույն Կանոնների 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված՝ ստուգվող անձի փաստաթղթերի ուսումնասիրության և (կամ) ապրանքների արտադրության ժամանակ օգտագործվող շինությունների (տարածքների) զննման համար:

2. Արտազնա ստուգումն իրականացվում է ներմուծող և արտահանող Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված ստուգող անձնակազմի կողմից արտահանող Կողմի տարածքում՝ ստուգելու համար թե

արդյոք ստուգվող անձի ապրանքները և (կամ) դրանց արտադրության պայմանները համապատասխանում են սույն Կանոնների պահանջներին՝ ստուգվող անձի գտնվելու վայրի և ապրանքների արտադրության համար օգտագործվող շինությունների (տարածքների) ստուգման միջոցով:

Սույն հոդվածի նպատակների համար ստուգվող անձնշանակում է արտահանող Կողմի ապրանքների արտահանող և (կամ) արտադրող, որի ապրանքները հանդիսանում են արտագնա ստուգման առարկա:

Սույն հոդվածի նպատակների համար արտագնա ստուգման առարկա նշանակում է այն ապրանքները, որոնց ստուգման նպատակով արտագնա ստուգման հարցում է ներկայացվել և որոնց համար ձևակերպվել են ապրանքի ծագման մասին փաստաթղթեր:

Արտագնա ստուգումը պետք է իրականացվի հաշվի առնելով արտահանող Կողմի համապատասխան օրենսդրությունը:

3. Արտագնա ստուգում իրականացնելու համար ներմուծող Կողմի մաքսային մարմինը պետք է գրավոր հարցում (այսուհետ՝ արտագնա ստուգման հարցում) ուղարկի արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնին այդպիսի ստուգում իրականացնելու վերաբերյալ իր մտադրության մասին:

4. Արտագնա ստուգման հարցումը պետք է լինի հիմնավորված, հնարավորինս լիարժեք և *inter alia* պետք է ներառի.

- a) հարցումն ուղարկած ներմուծող Կողմի մաքսային մարմնի անվանումը,
- b) ստուգվող անձի անվանումը,
- c) առաջարկվող արտագնա ստուգման առարկան, ներառյալ՝ նշելով ապրանքները և դրանց ծագման հետ կապված հիմնավորված կասկածները,
- d) նախնական տեղեկատվություն իրավասու մարմինների ներկայացուցիչների մասին, որոնք մասնակցելու են արտագնա ստուգմանը,
- e) այլ լրացուցիչ տեղեկատվություն՝ որը որոնցում նշվում են արտագնա ստուգում իրականացնելու ողջամիտ հիմքերը:

5. Արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինն արտագնա ստուգման հարցումը ստանալուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում պետք է գրավոր ձևով հայտնի արտագնա ստուգման իրականացմանը համաձայն լինելու կամ այն մերժելու մասին:

Արտահանող Կողմը պետք է նշված ժամանակահատվածում ստուգվող անձից ստանա արտագնա ստուգում իրականացնելու համաձայնություն կամ մերժում: Ստուգվող անձը պետք է տեղեկացվի այն մասին, որ արտագնա ստուգման մերժումը կդիտարկվի որպես պատշաճ հիմք՝ ներմուծող Կողմի մաքսային մարմնի կողմից համապատասխան ապրանքների համար ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը մերժելու համար:

6. Այն դեպքում, եթե սույն հոդվածի 5-րդ կետում նշված պատասխանը չի ստացվել սույն հոդվածի 3-րդ կետում նշված արտագնա ստուգման հարցումն ուղարկելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում, կամ ստացվել է արտագնա ստուգումն իրականացնելու մերժում, հարցումն ուղարկած ներմուծող Կողմը, մերժում է ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը արդեն իսկ ներմուծված ապրանքների համար, որոնց նկատմամբ հայցվել էր արտագնա ստուգում:

7. Արտագնա ստուգումը պետք է սկսվի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում և պետք է ավարտվի ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ քան այդպիսի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո հարյուր հիսուն (150) օրվա ընթացքում:

8. Արտահանող և ներմուծող Կողմերի իրավասու մարմինները, ինչպես նաև ստուգվող անձը պետք է ցուցաբերեն անհրաժեշտ աջակցություն ստուգող անձնակազմին արտագնա ստուգման ընթացքում:

Եթե արտագնա ստուգման ժամանակ ստուգվող անձի կամ ստուգվող Կողմի այլ անձանց կողմից ստեղծվում են խոչընդոտներ, որոնք անհնարին են դարձնում այդպիսի ստուգման անցկացումը, ներմուծող Կողմն իրավունք ունի մերժել արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքների հանդեպ ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը: Տվյալ տեղեկատվությունը պետք է նշվի արտագնա ստուգման արդյունքների մասին հաշվետվությունում:

9. Արտագնա ստուգման ժամանակ ստուգող անձնակազմն իրավունք ունի ստուգվող անձից պահանջել ցանկացած փաստաթուղթ և տեղեկություններ, այդ թվում՝ հաշվապահական, որոնք վերաբերում են արտագնա ստուգման առարկային:

10. Արտագնա ստուգման արդյունքները ձևակերպվում են անգլերեն լեզվով՝ արտագնա ստուգման արդյունքների մասին հաշվետվության ձևով:

Արտագնա ստուգման արդյունքների մասին հաշվետվությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

- արտագնա ստուգումն անցկացնող իրավասու մարմինների անվանումը, ներառյալ ստուգող անձնակազմի անդամների անունները, ազգանունները և պաշտոնները,

- ստուգվող անձի անվանումը,

- արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքների մասին տեղեկություններ,

- արտագնա ստուգման անցկացման ժամկետը,

- արտագնա ստուգման հիմքերը, այդ թվում ստուգվող ապրանքի ծագման վերաբերյալ սկզբնական կասկածները, արտագնա ստուգման գրավոր համաձայնության վավերապայմանները,

- տեղեկատվություն շինությունների և (կամ) տարածքների մասին, որոնցում անցկացվել է ստուգումը,

- որտեղ կիրառելի է՝ ստուգվող ապրանքի հանդեպ փաստացի իրականացվող արտադրական գործընթացի նկարագրությունը,

- արտագնա ստուգման արդյունքները (եզրակացությունները), որոնք հստակ նշում են սույն Կանոնների պահանջներին ստուգվող ապրանքի համապատասխանության կամ անհամապատասխանության մասին:

11. Արտագնա ստուգումն իրականացնող ստուգող անձնակազմը պետք է ոչ ուշ քան գրավոր համաձայնությունը ստանալուց հետո երկու հարյուր (200) օրվա ընթացքում ստուգվող անձին ուղարկի այդպիսի ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

12. Ներմուծող Կողմը կարող է արտագնա ստուգման մասին հարցումը ուղարկելու օրվանից մինչև արտագնա ստուգման արդյունքների ստացումը

(արտագնա ստուգման արդյունքների մասին հաշվետվության հաստատումը) ժամանակավորապես կասեցնել արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքներին համանման ապրանքների հանդեպ ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը: Այդպիսի կասեցման դեպքում նշված ապրանքների բաց թողումն իրականացվում է առանց ազատ առևտրի ռեժիմ տրամադրելու՝ ներմուծող Կողմի համապատասխան օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ազատ առևտրի ռեժիմը տրամադրվում է ներմուծող Կողմի համապատասխան օրենսդրության համաձայն արտագնա ստուգման արդյունքների հիման վրա, որոնք կնշեն, որ արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքները համապատասխանում են սույն Կանոնների պահանջներին:

Սույն կետի նպատակների համար՝ համանման ապրանքներ են այն ապրանքները, որոնք դասակարգվում են Ներդաշնակեցված համակարգի նույն ծածկագրով և ունեն նույն նկարագրությունը, ինչ որ արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքները, արտադրվել են նույն արտադրողի կողմից կամ իրացվել են նույն արտահանողի կողմից, ինչ որ արտագնա ստուգման առարկա հանդիսացող ապրանքները:

13. Ստուգող անձնակազմի բոլոր ծախսերը, որոնք կապված են Ներմուծող Կողմի ներկայացուցիչների արտագնա ստուգման մասնակցության հետ, կրում է ներմուծող Կողմը:

Հոդված 17

Ապրանքների ծագման հավաստագրման և վերիֆիկացիայի էլեկտրոնային համակարգի մշակումը և ներդրումը

1. Կողմերը ձգտելու են ներդնել ԱԾԿԿԷՀ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից երկու (2) տարուց ոչ ուշ:

2. ԱԾԿԿԷՀ հիմնված է Կողմերի լիազոր մարմինների և մաքսային մարմինների միջև տրված ապրանքի ծագման մասին հավաստագրերի (CT-2 ձև) վերաբերյալ տեղեկատվության փոխանակման վրա: Տեղեկատվության այդպիսի փոխանակումը պետք է ապահովի հնարավորություն..

a) ներմուծող Կողմի մաքսային մարմինն չներկայացնել ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) բնօրինակը թղթային տարբերակով, երբ ապրանքների հայտարարագրումն իրականացվում է էլեկտրոնային ձևով,

b) ներմուծող Կողմի մաքսային մարմինն ստուգել արտահանող Կողմի լիազոր մարմնի կողմից տրվող ապրանքի ծագման հավաստագրերի (CT-2 ձև) իսկությունն ու բովանդակությունը;

3. ԱԾԿԿԷՀ մշակման և ներդրման նպատակով Կողմերը կստեղծեն փորձագիտական աշխատանքային խումբ:

4. ԱԾԿԿԷՀ շրջանակներում տեղեկատվական փոխանակման կանոնները, այդ թվում՝ տեխնիկական պայմանները ձևակերպվում են առանձին:

Հոդված 18

Ապրանքի ծագման մասին հավաստագրի լրացման պահանջները և ընթացակարգերը

1. Ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) տրամադրվում և լրացվում է տպագիր (բացառությամբ ստորև նշված դեպքերի) անգլերեն կամ ռուսերեն լեզվով պաշտպանիչ ցանցով կամ պաշտպանիչ գունային դաշտով A4 (210 x 297 մմ) չափի թղթի վրա՝ ոչ պակաս, քան 25 գ/քմ խտությամբ և տպագրական եղանակով պատրաստված:

2. Ապրանքի ծագման մասին հավաստագրում (CT-2 ձև) չի թույլատրվում օգտագործել անձանց ստորագրությունների ֆաքսիմիլե և կատարել ջնջումներ, ուղղումներ և (կամ) լրացումներ, որոնք չեն հաստատվել իրավասու մարմնի կողմից:

3. Ուղղումները և (կամ) լրացումներն ապրանքի ծագման մասին հավաստագրի մեջ կատարվում են սխալ տեղեկատվությունը ջնջելու և ճիշտ տեղեկությունները տպելու կամ ձեռքով լրացնելու միջոցով՝ հաստատված ապրանքի ծագման մասին հավաստագիրը նախկինում տված իրավասու մարմնի կնիքով:

4. Ապրանքի ծագման մասին հավաստագիրը (CT-2 ձև) լրացվում է հետևյալ պահանջներին համապատասխան.

a) 1-ին սյունակում՝ «Consignor/exporter (name and address)» («Грузоотправитель/экспортер (наименование и адрес)») նշվում է բեռնառաքիչի/արտահանողի անվանումը և դրա լրիվ հասցեն և երկիրը: Այն դեպքում, եթե բեռնառաքիչը և արտահանողը տարբեր անձինք են, ապա պետք է նշել, որ բեռնառաքիչը (անվանումը և հասցեն) գործում է արտահանողի (անվանումը և հասցեն) անունից («հանձնարարությամբ»): Այն դեպքում, եթե բեռնառաքիչը/արտահանողը հանդիսանում է ֆիզիկական անձ, ապա նշվում է նրա անունը, ազգանունը, հասցեն,

b) 2-րդ սյունակում՝ «Consignee/importer (name and address)» («Грузополучатель/импортер (наименование и адрес)») նշվում է բեռնաստացողի (ներմուծողի) անվանումը և դրա լրիվ հասցեն և երկիրը: Այն դեպքում, եթե բեռնաստացողը և ներմուծողը տարբեր անձինք են, ապա պետք է նշել, որ բեռնաստացողը (անվանումը և հասցեն) գործում է ներմուծողի (անվանումը և հասցեն) անունից («հանձնարարությամբ»): Այն դեպքում, եթե բեռնաստացողը/ներմուծողը հանդիսանում է ֆիզիկական անձ, ապա նշվում է նրա անունը, ազգանունը, հասցեն,

c) 3-րդ սյունակում՝ «Means of transport and route (as far as known)» («Средства транспорта и маршрут следования (насколько это известно)»), նշվում են տրանսպորտային միջոցները և երթուղին, որքանով դա հայտնի է,

d) 4-րդ սյունակում՝ նշվում է ապրանքի ծագման մասին հավաստագրի (CT-2 ձև) գրանցման համարը, ապրանքի ծագման հավաստագիրը (CT-2 ձև) տրամադրող Կողմը և Կողմը, որին պետք է ներկայացվի այդ ապրանքի ծագման հավաստագիրը (CT-2 ձև): Գրանցման համարը կարող է գրել ձեռագրով, կամ դրոշմավորման միջոցով

e) 5-րդ սյունակում՝ «For official use» («Для служебных отметок») ձեռագիր կամ դրոշմավորման միջոցով կատարվում են ապրանքն արտահանող, տարանցող և (կամ) ստացող երկրների լիազոր մարմինների ծառայողական նշումները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հետևյալ գրառումները՝ «Дубликат» կամ «Duplicate», «Выдан взамен сертификата формы СТ-2» կամ «Issued instead of certificate form СТ-2», «Выдан впоследствии» կամ «Issued retrospectively», «Выдан на основании сертификата формы СТ-2» կամ «Issued on the basis of certificate form СТ-2» և այլն: Ձեռագիր կատարված գրառումները հաստատվում են սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով,

f) 6-րդ սյունակում՝ «N» նշվում է ապրանքի հերթական համարը,

g) 7-րդ սյունակում՝ «Number and kind of packages» («Количество мест и вид упаковки») նշվում է տեղերի քանակը և ապրանքի փաթեթավորման տեսակը,

h) 8-րդ սյունակում՝ «Description of goods» («Описание товара») նշվում են ապրանքի առևտրային անվանումը և այլ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս ապրանքը նույնացնել հայտարարվածի հետ՝ մաքսային հայտարարագրման նպատակների համար: 8-րդ սյունակի լրացման համար նախատեսված տեղը չբավարարելու դեպքում կարող է օգտագործվել ապրանքի ծագման մասին հավաստագրի (СТ-2 ձև) լրացուցիչ ձևաթուղթ (ձևաթղթեր) (լրացուցիչ ձևաթուղթի ձևը ներկայացված է սույն Կանոնների N 1 Հավելվածում), որը լրացվում է սահմանված կարգով (հաստատված ստորագրությամբ և կնիքով և թվագրված նույն գրանցման համարով, որը նշված է ապրանքի ծագման մասին հավաստագրի (СТ-2 ձև) 4-րդ սյունակում),

i) 9-րդ սյունակում՝ «Origin criterion» («Критерий происхождения») նշվում են ծագման հետևյալ չափանիշները.

«P» – ապրանքն ամբողջությամբ արտադրվել է Կողմում,

«Y» – ապրանքը ենթարկվել է բավարար մշակման (վերամշակման) Կողմում՝ նշելով արտահանվող ապրանքների արժեքում արտադրության մեջ օգտագործված օտարերկրյա ծագում ունեցող նյութերի արժեքի տոկոսային մասնաբաժինը (օրինակ՝ «Y15%»),

«PK» – ապրանքը համարվում է ծագող՝ կուտակային սկզբունքին համապատասխան,

Հայտարարագրված յուրաքանչյուր ապրանքի համար 9-րդ սյունակում պետք է նշվի առանձին ծագման չափանիշ,

j) 10-րդ սյունակում՝ «Quantity of goods» («Ապրանքի քանակը») նշվում է ապրանքի քաշը տարայով (կիլոգրամներով) և (կամ) ապրանքի այլ քանակային բնութագրերը:

k) 11-րդ սյունակում՝ «Number and date of invoice» («Номер и дата счета-фактуры») նշվում են այն ապրանքների բոլոր հաշիվ ապրանքագրերի (ինվոյսների) համարներն ու տարեթվերը, որոնց համար տրամադրվել է ապրանքի ծագման հավաստագիր (СТ-2 ձև),

l) 12-րդ սյունակում՝ «Certification» («Վկայական») նշվում է լիազոր մարմնի անվանումը, հասցեն, կնիքը և ապրանքի ծագման հավաստագրի (СТ-2 ձև) (կրկնօրինակը) տրամադրման ամսաթիվը, ինչպես նաև այն անձի ստորագրությունը, ազգանունը և անունը (անվանատառերը), որը լիազորված է

հավաստել ապրանքի ծագման մասին հավաստագիրը (СТ-2 ձև) (կրկնօրինակը): Ամսաթիվը, լիազոր մարմնի ազգանունը և անունը (անվանատառերը) կարող են լրացվել ձեռագիր կամ դրոշմավորմամբ,

Կնիքի արտատիպում Կողմի լիազոր մարմնի լրիվ անվանման մասին ռուսերեն կամ անգլերեն լեզվով տվյալների առկայության դեպքում, այդպիսի տեղեկությունների լրացուցիչ նշումը տվյալ սյունակում պարտադիր չէ:

Կնիքի արտատիպ պետք է լինի հստակ, որպեսզի թույլ տա անհրաժեշտության դեպքում պարզել դրա իսկությունը:

m) 13-րդ սյունակում՝ «Declaration by the applicant» («Декларация заявителя») Նշվում է երկիրը, որտեղ ապրանքն ամբողջությամբ ստացվել կամ ենթարկվել է բավարար մշակման (վերամշակման)՝ (ԵԱՏՄ անդամ պետություն կամ Սերբիա), ապրանքների ծագման երկրի մասին տեղեկությունների հայտարարագրման ամսաթիվը, ինչպես նաև դրվում են հայտատուի կնիքը (առկայության դեպքում), նրա ստորագրությունը, ազգանունը և անվանատառերը: Ամսաթիվը, ինչպես նաև հայտատուի ազգանունը և անվանատառերը կարող են լրացվել ձեռագիր կամ դրոշմավորմամբ:

5. Ապրանքի ծագման մասին հավաստագրի (СТ-2 ձև) լրացումը ձևաթղթի հակառակ կողմի վրա չի թույլատրվում:

Հոդված 19

Անցումային դրույթներ

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մեկ (1) տարվա ընթացքում լիազոր մարմինները կարող են օգտագործել ապրանքի ծագման մասին հավաստագրեր (СТ-2 ձև), որոնք ներկայումս օգտագործվում են Կողմերում և տարբերվում են սույն կանոնների N 1 Հավելվածում սահմանված ձևից: Այդպիսի ապրանքի ծագման մասին հավաստագրերը (СТ-2 ձև) լրացվում են սույն Կանոնների 18-րդ հոդվածով սահմանված պահանջները հաշվի առնելով:

**Ապրանքի ծագման մասին հավաստագիր (СТ-2 ձև)
և ծագման հավաստագրի լրացուցիչ թերթի ձևաթուղթ**

I. Ապրանքի ծագման մասին հավաստագիր (СТ-2 ձև)

(Բուսերեն լեզվով)

1. Грузоотправитель/экспортер (наименование и адрес)			4. № _____ Сертификат о происхождении товара форма СТ-2		
2. Грузополучатель/импортер (наименование и адрес)			Выдан в _____ (наименование страны) Для предоставления в _____ (наименование страны)		
3. Средства транспорта и маршрут следования (насколько это известно)			5. Для служебных отметок		
6. №	7. Количество мест и вид упаковки	8. Описание товара	9. Критерий происхождения	10. Количество товара	11. Номер и дата счета-фактуры
12. Удостоверение Настоящим удостоверяется на основе проведенного контроля, что декларация заявителя соответствует действительности			13. Декларация заявителя Нижеподписавшийся заявляет, что вышеприведенные сведения соответствуют действительности, что все товары полностью произведены или подвергнуты достаточной обработке (переработке) в _____ (наименование страны) и что они отвечают требованиям происхождения, установленным в отношении таких товаров		
Подпись Дата Печать			Подпись Дата Печать		

Form CT-2

1. Consignor/exporter (name and address)			4. No. _____		
2. Consignee/importer (name and address)			Issued in		

3. Means of transport and route (as far as known)			For submission to		

5. For official use			5. For official use		
6. No.	7. Number and kind of packages	8. Description of goods	9. Origin criterion	10. Quantity of goods	11. Number and date of invoice
12. Certification It is hereby certified, on the basis of control carried out, that the declaration by the applicant is correct			13. Declaration by the applicant The undersigned hereby declares that the above details are correct: that all goods were produced or underwent sufficient processing in		
Signature Date Stamp			(country)		
			and that they comply with the origin requirements specified for these goods		
Signature Date Stamp			Signature Date Stamp		

II. Ապրանքի ծագման մասին հավաստագրի (СТ-2 ձև) լրացուցիչ թերթի ձևաթուղթ

(Ռուսերեն լեզվով)

6. №	7. Количество мест и вид упаковки	8. Описание товара	9. Критерий происхождения	10. Количество товара	11. Номер и дата счета-фактуры
<p>12. Удостоверение</p> <p>Настоящим удостоверяется на основе проведенного контроля, что декларация заявителя соответствует действительности</p> <p>Подпись Дата Печать</p>			<p>13. Декларация заявителя</p> <p>Нижеподписавшийся заявляет, что вышеприведенные сведения соответствуют действительности, что все товары полностью произведены или подвергнуты достаточной обработке(переработке) в</p> <p>(наименование страны)</p> <p>и что они отвечают требованиям происхождения, установленным в отношении таких товаров</p> <p>Подпись Дата Печать</p>		

(անգլերեն լեզվով)

6. No.	7. Number and kind of packages	8. Description of goods	9. Origin criterion	10. Quantity of goods	11. Number and date of invoice
<p>12. Certification It is hereby certified, on the basis of control carried out, that the declaration by the applicant is correct</p> <p>Signature Date Stamp</p>			<p>13. Declaration by the applicant The undersigned hereby declares that the above details are correct: that all goods were produced or underwent sufficient processing in</p> <p>(country)</p> <p>and that they comply with the origin requirements specified for these goods</p> <p>Signature Date Stamp</p>		

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Ապրանքների ծագման
երկիրը որոշելու
կանոնների

ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ապրանքի ծագման մասին հայտարարագիրը՝ արտադրողի, արտահանողի կամ բեռնառաքիչի կողմից ներկայացվող հայտարարագիր է, որի մեջ նշվում է ապրանքնի ծագման երկիրը՝ ռուսերեն կամ անգլերեն լեզվով ստորև ներկայացված գրառման տեսքով:

Անգլերեն տարբերակ.

The exporter _____ «1» declares that the country of origin of goods covered by this document is _____ «2».
_____ «3».

Date, Signature

Notes:

«1» – The name of the exporter, producer or consignor of goods in accordance with accompanying documents.

«2» – The name of country of origin of goods.

«3» – Signature, surname, name of authorised person of exporter, producer or consignor.

Ռուսերեն տարբերակ.

Экспортер _____ «1» заявляет, что страной происхождения товаров, поименованных в настоящем документе, является

_____ «2».

_____ «3».

Дата, подпись

Примечания:

«1» – указывается наименование экспортера, изготовителя или грузоотправителя товаров согласно документу, который используется в качестве декларации о происхождении товара.

«2» – указывается название страны происхождения товаров.

«3» – указывается подпись, фамилия, имя представителя экспортера, изготовителя или грузоотправителя.

Հավելված 4

Դրույթներ հակազնագցման ուսումնասիրությունների ընթացքում նորմալ արժեքի որոշման մասին

Կողմերը համաձայնեցին հետևյալի մասին.

Հակազնագցման ուսումնասիրությունների և ցանկացած հետագա հակազնագցման ընթացակարգերի անցկացման նպատակով, ներառյալ՝ վերանայումները, ոչ մի Կողմ չի կիրառում արտահանող Կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքների նորմալ արժեքի որոշման ոչ մի մեթոդներ, որոնք, համաձայն Հակազնագցման մասին համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.7 կետի կամ ՄԱԳՀ 1994-ի I-ին Հավելվածում (Ծանոթագրություններ և լրացուցիչ դրույթներ) պարունակվող ՄԱԳՀ 1994-ի VI-րդ հոդվածի 1-ին կետի Երկրորդ լրացուցիչ դրույթի, մասամբ կամ ամբողջությամբ հիմնված են սուտոգատ երկրի տվյալների վրա:

Հակազնագցման ուսումնասիրությունների և ցանկացած հետագա հակազնագցման գործողությունների անցկացման նպատակով, ներառյալ՝ վերանայումները, ոչ մի Կողմ չի կիրառում որևէ մեթոդ, որը թույլ է տալիս հաշվի չառնել կամ ճշգրտել արտահանող Կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքի արտահանողների և (կամ) արտադրողների ծախքերի մասին տվյալները այն դեպքերում, երբ ուսումնասիրությունն ացկացնող մարմինը եզրակացրել է, որ շուկաների գործելու, արտադրության գործոնների առանձնահատկությունների հետևանքով.

a) գոյություն ունի «հատուկ շուկայական իրավիճակ» համանման ապրանքի շուկայում՝ և (կամ)

b) ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի արտահանողների կամ արտադրողների փաստաթղթերում գրանցված ծախքերը ողջամտորեն չեն արտցոլում ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի արտադրության և վաճառքի հետ կապված ծախքերը, այն ժամանակ, երբ փաստաթղթերը ցանկալի կամ բավարար չափով համապատասխանում կամ վերատադրում են այն ծախքերը, որոնք այդ արտահանողները կամ արտադրողները կրել են:

Հավելված 5 Վեճերի լուծում

Հոդված 1 Նպատակներ

Սույն Հավելվածի նպատակն է սույն Համաձայնագրի շրջանակներում առաջացող վեճերի լուծման արդյունավետ, գործուն և թափանցիկ մեխանիզմի ստեղծումը՝ հնարավորության դեպքում փոխադարձ ընդունելի որոշում ձեռք բերելու համար:

Հոդված 2 Սահմանումներ

Սույն Հավելվածի նպատակների համար՝

a) «**Արբիտրաժային պանել**» նշանակում է Արբիտրաժային պանել, որը ձևավորվում է սույն Հավելվածի 8-րդ հոդվածի համաձայն.

b) «**Վեճի կողմեր**» նշանակում է բողոքը ներկայացնող Կողմը և այն Կողմը, որի նկատմամբ այն ներկայացվել է : Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները և Եվրասիական տնտեսական միությունը կարող են հանդես գալ որպես վեճի Կողմ՝ համատեղ կամ անհատականորեն: Վերջին դեպքում, եթե միջոցն ընդունվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կողմից, ապա վեճի Կողմը Եվրասիական տնտեսական միության այդ անդամ պետությունն է, իսկ եթե միջոցն ընդունվել է Եվրասիական տնտեսական միության կողմից, ապա վեճի Կողմը նա է.

c) «**Հայցվոր Կողմ**» նշանակում է Կողմ, որը ներկայացնում է բողոքը,

d) «**Պատասխանող կողմ**» նշանակում է Կողմ, որի նկատմամբ ներկայացվում է բողոքը.

e) «**Արբիտր**» նշանակում է սույն Հավելվածի 8-րդ հոդվածին համապատասխան պատշաճ կերպով ձևավորված Արբիտրաժային պանելի անդամ.

f) «**Նախագահ**» նշանակում է արբիտր, որը հանդես է գալիս Արբիտրաժային պանելի նախագահի դերում.

g) «**Օգնական**» նշանակում է անձ, որը արբիտրի նշանակման պայմանների համապատասխան, վարում է, կատարում ուսումնասիրություններ կամ աջակցություն է ցուցաբերում արբիտրին.

h) «**Օրեր**» նշանակում է օրացույցային օրեր, ներառյալ՝ ոչ աշխատանքային և տոնական օրերը:

Հոդված 3

Կիրառման ոլորտը

Եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, սույն Հավելվածի դրույթները պետք է կիրառվեն Կողմերի միջև ցանկացած վեճերի նկատմամբ, որոնք ծագում են Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և/կամ կիրառման ժամանակ, երբ Կողմերից որևէ մեկը համարում է, որ մյուս Կողմի միջոցը հակասում է նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներով սահմանված պարտավորությանը, կամ որ մյուս Կողմը չի կատարում սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները:

Հոդված 4

Տեղեկատվության փոխանակում

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև և Եվրասիական տնտեսական միության կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած վեճին առնչությամբ ցանկացած դատավարական փաստաթղթի տարածումը չի կարող դիտվել որպես սույն Համաձայնագրի և/կամ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաբեշի համաձայնագրի գաղտնիության մասին դրույթների խախտում:

Հոդված 5

Խորհրդատվություններ

1. Վեճի կողմերը պարտավորվում են գործադրեն բոլոր ջանքերը սույն Հավելվածի 3-րդ հոդվածում նշված ցանկացած հարցով ցանկացած վեճ՝ փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով խորհրդատվությունների միջոցով լուծելու համար:

2. Խորհրդատվություններ անցկացնելու մասին հարցումը սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի համաձայն գրավոր ձևով ուղարկվում է պատասխանող Կողմին՝ նրա կոնտակտային կետի միջոցով և պետք է պարունակի դրա ներկայացման հիմքերը, այդ թվում՝ վեճի առարկա հանդիսացող միջոցների կամ այլ հարցերի սահմանումը, ինչպես նաև բողոքի փաստական և իրավական հիմքերը: Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի հարցում ուղարկելու մասին:

3. Այն դեպքում, երբ խորհրդատվություններ անցկացնելու մասին հարցումն ուղարկվել է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, պատասխանող Կողմը պետք է ժամանակին գրավոր ձևով պատասխանի հարցմանը՝ դրա ստացման օրվանից տաս (10) օրվա ընթացքում և հարցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում սկսի խորհրդատվությունները հայցվոր Կողմի հետ բարեխիղճ համագործակցության ոգով՝ փոխընդունելի լուծում գտնելու համար:

4. Անհետաձգելի հարցերով խորհրդատվությունները, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների վերաբերյալ, անցկացվում են հարցումը ստանալու օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում նշված ժամկետները կարող են փոփոխվել վեճի Կողմերի պայմանավորվածությամբ:

6. Խորհրդատվությունների ընթացքում վեճի յուրաքանչյուր Կողմ պետք է տրամադրի բավականաչափ փաստացի տեղեկատվություն, որպեսզի հնարավորություն տրվի լիարժեք ուսումնասիրելու թե ինչպես կարող են գործող կամ առաջարկվող միջոցը կամ ցանկացած այլ հարց ազդել սույն Համաձայնագրի կատարման և կիրառման վրա:

7. Խորհրդատվությունները, մասնավորապես, քննության ընթացքում տարածվող ամբողջ տեղեկատվությունը և վեճի Կողմերի ընդունած դիրքորոշումները գաղտնի են և չպետք է վնասեն որևէ Կողմի իրավունքները ցանկացած հետագա քննության շրջանակներում: Խորհրդատվությունների ընթացքում փոխանակված ցանկացած գաղտնի կամ ծառայողական տեղեկատվությանը վեճի Կողմերը պետք է վերաբերվեն այնպես, ինչպես վերաբերվում է այդ տեղեկատվությունը տրամադրող Կողմը:

8. Սույն հոդվածին համապատասխան խորհրդատվությունների ընթացքում վեճի յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի դրանցում իրավասու կառավարական մարմինների կամ այլ կարգավորող մարմինների անձնակազմի մասնակցությունը, որոնք ունեն խորհրդատվությունների առարկա հանդիսացող հարցի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ/փորձ:

9. Վեճի Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, խորհրդատվություններն անցկացվում են պատասխանող Կողմի տարածքում: Վեճի Կողմերի պայմանավորվածությունից ելնելով, խորհրդատվությունները կարող են անցկացվել կապի ցանկացած հասանելի տեխնոլոգիական միջոցների օգտագործմամբ:

Հոդված 6

Միջնորդություն, հաշտարարություն կամ մեղիացիա

1. Կողմերն իրավունք ունեն սույն Հավելվածին համապատասխան վեճի լուծման ցանկացած ընթացակարգի ցանկացած փուլում դիմելքարի ծառայությունների, հաշտարարության կամ միջնորդության համար: Բարի ծառայությունների մատուցումը, հաշտարարությունը կամ միջնորդությունը կարող են նախաձեռնվել ցանկացած ժամանակ և կասեցվել կամ դադարեցվել ցանկացած ժամանակ՝ երկու Կողմերի կողմից էլ:

2. Քննությունները, որոնց շրջանակներում ներգրավվել են բարի ծառայություններ, միջնորդություն և հաշտարարություն և, մասնավորապես, այդպիսի քննությունների ընթացքում վեճի Կողմերի դիրքորոշումները պետք է

գաղտնի պահվեն և չվնասեն վեճի Կողմերի որևէ իրավունք ցանկացած հետագա քննություններում:

Հոդված 7

Արբիտրաժային պանելի ձևավորման հարցում

1. Հայցվոր Կողմը, որը հարցում է ներկայացրել սույն Հավելվածի 5-րդ հոդվածի համաձայն խորհրդատվություններ անցկացնելու կամ սույն Հավելվածի 6-րդ հոդվածով նախատեսված միջնորդության վերաբերյալ, կարող է գրավոր ձևով դիմել՝ Արբիտրաժային պանելի ձևավորելու խնդրանքով, եթե.

a) պատասխանող Կողմը չի պահպանում սույն Հավելվածի 5-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կետերին համապատասխան ժամկետները,

b) վեճի Կողմերը համատեղ գտնում են, որ սույն Հավելվածի 5-րդ հոդվածով նախատեսված խորհրդատվությունները չեն օգնել կարգավորել վեճը սույն Հավելվածի 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված խորհրդատվությունների անցկացման հարցումը ստանալու օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում կամ անհետաձգելի դեպքերում, այդ թվում շուտ փչացող ապրանքների նկատմամբ՝ երեսուն (30) օրվա ընթացքում, կամ

c) Պատասխանող Կողմը չի կատարում փոխընդունելի որոշումը, որը մշակվել է խորհրդատվությունների ընթացքում սույն Հավելվածի 5-րդ հոդվածին համապատասխան:

2. Արբիտրաժային պանելի հիմնադրման հարցումը պատասխանող Կողմին է ուղարկվում գրավոր ձևով, նրա՝ Համաձայնագրի 29-րդ հոդվածին համապատասխան նշանակված կոնտակտային կետի միջոցով, և Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի հարցում ուղարկելու մասին: Հայցվոր Կողմը իր հարցման մեջ պետք է սահմանի վեճի առարկա հանդիսացող կոնկրետ միջոցը և պարզաբանի, թե տվյալ միջոցը ինչպես է խախտում նշված դրույթները՝ այնպիսի եղանակով, որը բավարար է բողոքի փաստական և իրավական հիմքերը ճշգրիտ ներկայացնելու համար: Պատասխանող Կողմը պետք է անհապաղ հաստատի հարցման ստացումը, հայցվոր Կողմին ծանուցելու միջոցով՝ նշելով հարցումը ստանալու ամսաթիվը, և Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի հարցում ստացվելու մասին:

3. Արբիտրաժային պանելի ստեղծման հարցումը ստանալու օրվանից քսան (20) օրվա ընթացքում վեճի Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում Արբիտրաժային պանելի իրավասությունները կսահմանվեն հետևյալն ձևով.

«Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, եվ Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի համապատասխան դրույթների ներքո ուսումնասիրել սույն Համաձայնագրի 5-րդ հավելվածի 7-րդ հոդվածին համապատասխան Արբիտրաժային պանելի ձևավորման հարցման մեջ նշված հարցը, որոշում

կայացնել քննարկվող միջոցի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հավելվածի 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխանության վերաբերյալ և պարզել փաստերը, համապատասխան դրույթների կիրառելիությունը և ցանկացած եզրակացության և առաջարկության հիմնավորումները և պատրաստել զեկույց՝ սույն Համաձայնագրի 5-րդ Հավելվածի 12-րդ հոդվածին համապատասխան»:

Եթե վեճի Կողմերը համաձայնեցնում են Արբիտրաժային պանելի այլ իրավասություններ, նրանք պետք է տեղեկացնեն Արբիտրաժային պանելին այդ համաձայնեցված իրավասությունների մասին սույն հոդվածի 3-րդ կետում նշանակված ժամկետներում:

4. Անհետաձգելի դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների հարցով, վեճի Կողմերը պետք է գործադրեն բոլոր ջանքերը Արբիտրաժային պանելի ձևավորումն հնարավոր առավելագույն չափով արագացնելու համար:

Հոդված 8

Արբիտրաժային պանելի կազմը և ձևավորումը

1. Արբիտրաժային պանելը կազմված է երեք (3) արբիտրներից:

2. Պատասխանող Կողմի կողմից Արբիտրաժային պանել ձևավորելու հարցումը ստանալու պահից երեսուն (30) օրվա ընթացքում վեճի յուրաքանչյուր Կողմը նշանակում է արբիտր:

Բոլոր արբիտրները պետք է.

a) ունենան գիտելիքներ և/կամ փորձ իրավունքի, միջազգային առևտրի, սույն Համաձայնագրին առնչվող այլ ոլորտներում, կամ միջազգային առևտրային համաձայնագրերից բխող վեճերի լուծման ոլորտում,

b) ընտրվեն, խստորեն պահպանելով օբյեկտիվության, անաչառության, բարեխղճության և ողջամտության սկզբունքները,

c) լինեն անկախ վեճի ցանկացած Կողմից և չհանդիսանալ դրանց փոխկապակցված անձ կամ չգործել դրանց հրահանգներին համապատասխան,

d) կատարեն պարտականությունները ընդհանուր կարգավիճակով, չստանան հրահանգներ որևէ կազմակերպությունից կամ կառավարությունից, կամ փոխկապակցված չլինեն վեճի Կողմերից ցանկացածի կառավարության հետ,

e) վեճի Կողմերին հայտնեն ցանկացած տեղեկատվություն, որը կարող է հիմք հանդիսանալ նրանց անկախության և անաչառության նկատմամբ հիմնավորված կասկածի առաջացման համար, այդ թվում՝ որը վերաբերում է քննարկվող հարցով շահերի անմիջական կամ անուղղակի բախմանը,

f) հանդիսանան այնպիսի պետությունների քաղաքացիներ, որոնք դիվանագիտական հարաբերություններ ունեն ինչպես Սերբիայի Հանրապետության, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ, և

g) ոչ մի կերպ կապված չլինեն այդ վեճի հետ նախկինում այս կամ այն կարգավիճակով, այդ թվում՝ սույն Հավելվածի 6-րդ հոդվածին համապատասխան:

3. Երկրորդ արբիտրի նշանակումից հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում, նշանակված արբիտրները պետք է փոխադարձ համաձայնությամբ ընտրեն Արբիտրաժային պանելի նախագահին, որը չպետք է համապատասխանի ստորև ներկայացված չափորոշիչներից ոչ մեկին, որը թույլ կտա նրան բացարկ հայտնել,

a) լինել Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Սերբիայի Հանրապետության քաղաքացի, կամ

b) ունենալ մշտական բնակություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Սերբիայի Հանրապետության տարածքում :

4. Այն դեպքում, երբ անհրաժեշտ նշանակումները չեն իրականացվել սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետներում, վեճի ցանկացած Կողմ իրավունք ունի վեճի Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի (այսուհետ՝ «ԱՄԴ») նախագահին, որպեսզի նա հանդես գա որպես նշանակող անձ: Եթե ԱՄԴ նախագահը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Սերբիայի Հանրապետության քաղաքացի է, կամ կատարելու չի կարող իրականացնել նշանակող անձի գործառույթը՝ անհրաժեշտ նշանակումների իրականացման հարցումով պետք է դիմել ԱՄԴ փոխնախագահին, կամ ըստ ավագության նրան հաջորդող պաշտոնատար անձին, որը չի հանդիսանում Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Սերբիայի Հանրապետության քաղաքացի և կարող է իրականացնել նշանակող անձի գործառույթը:

5. Եթե սույն հոդվածով նշանակված արբիտրը վեճի լուծման ընթացակարգի ընթացքում հրաժարական է տալիս կամ ի վիճակի չէ գործել, սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով տասնհինգ (15) օրվա ընթացքում նշանակվում է իրավահաջորդ արբիտր, որն օժտվում է սկզբում նշանակված արբիտրի բոլոր իրավասություններով և պարտավորություններով: Քննության նկատմամբ կիրառելի ցանկացած ժամկետները կասեցվում են արբիտրի կողմից հրաժարականի ներկայացման կամ գործելու կարողությունից զրկվելու օրվանից մինչև այդպիսի արբիտրին փոխարինող անձի ընտրությունը:

6. Արբիտրաժային պանելի ձևավորման օր է համարվում Արբիտրաժային պանելի նախագահի կողմից իր նշանակումն ընդունելու օրը:

Հոդված 9

Արբիտրաժային պանելի գործառույթները

1. Արբիտրաժային պանելը, որը ձևավորվել է սույն Հավելվածի 8-րդ հոդվածին համապատասխան, պետք է.

a) օբյեկտիվ գնահատական տա իր քննարկմանը ներկայացրած հարցին, ներառյալ օբյեկտիվորեն ուսումնասիրի գործով փաստերը, սույն Համաձայնագրի դրույթների կիրառելիությունը, որոնց վրա հղում են կատարում վեճի Կողմերը և սույն Համաձայնագրով պատասխանող կողմի ստանձնած պարտավորությունները չկատարելու փաստի առկայությունը:

b) իր որոշումներում և զեկույցներում շարադրի պարզված փաստերը, ցանկացած եզրակացությունների և որոշումների կայացման հիմնավորումը, որոնք անհրաժեշտ են իր քննարկմանը ներկայացրած վեճի լուծման համար՝ իր հայեցողությամբ որոշվող կարգով,

c) կանոնավոր հիմքերով խորհրդակցի վեճի Կողմերի հետ և տրամադրի վեճի փոխընդունելի լուծման մշակման համար համարժեք հնարավորություններ,

d) վեճի Կողմի հարցմամբ վերջնական զեկույցի միջոցով որոշի ցանկացած իրականացման միջոցների համապատասխանությունը և/կամ շահերի կասեցման :
для определения соответствия любых имплементационных мер и / или соответствующей приостановки льгот

2. Սույն Հավելվածի համաձայն ձևավորված Արբիտրաժային պանելը պետք է մեկնաբանի սույն Համաձայնագրի դրույթները միջազգային հանրային իրավունքի ընդունված նորմերին համապատասխան: Արբիտրաժային պանելի զեկույցները և որոշումները չեն կարող ավելացնել կամ նվազեցնել Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի դրույթներով:

Հոդված 10

Արբիտրաժային պանելի աշխատանքի ընթացակարգը

1. Արբիտրաժային պանելի նիստերն անցկացվում են սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին կետը, արբիտրաժային պանելը կարգավորում է իր սեփական կանոնները և ընթացակարգերը վեճի Կողմերի լսված լինելու իրավունքների և վեճի Կողմերի հետ խորհրդակցելով որոշում կայացնելու հարցերի առնչությամբ: Վեճի Կողմերի հարցմամբ, կամ սեփական նախաձեռնությամբ Արբիտրաժային պանելը կարող է վեճի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո ընդունել լրացուցիչ կանոններ և ընթացակարգեր, որոնք չեն հակասում սույն հոդված դրույթներին:

3. Վեճի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո Արբիտրաժային պանելը պետք է իր ձևավորումից հետո 10 (տաս) օրվա ընթացքում սահմանի Արբիտրաժային

պանելի նիստերի ժամանակացույցը: Անհետաձգելի դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում, որոնք արագ կորցնում են իրենց սպառողական արժեքը, Արբիտրաժային պանելը և Կողմերը պետք է բոլոր ջանքերը գործադրեն քննությունը առավելագույն հնարավոր չափով արագ անցկացնելու համար: Ժամանակացույցը պետք է ներառի վեճի Կողմերի կողմից գրավոր փաստաթղթերի ներկայացման հստակ ժամանակացույց: Արբիտրաժային պանելն իրավունք ունի փոփոխություններ կատարել այդպիսի ժամանակացույցում՝ Կողմերի հետ խորհրդակցելով:

4. Արբիտրաժային պանելը վեճի Կողմի հարցմամբ կամ իր սեփական նախաձեռնությամբ կարող է փնտրել տեղեկատվություն և/կամ ստանալ գիտական կամ տեխնիկական հարցով ցանկացած խորհրդատվություններ իր հայեցողությամբ ցանկացած անձից կամ մարմնից, որին կհամարի պատշաճ: Նախքան այդպիսի տեղեկատվություն փնտրելը և/կամ այդպիսի խորհրդատվություն ստանալը Արբիտրաժային պանելը այդ մասին պետք է հայտնի վեճի Կողմերին: Նման ձևով ստացված տեղեկատվությունը և/կամ խորհրդատվությունը պետք է ներկայացվեն վեճի Կողմերին՝ իրենց մեկնաբանությունները ներկայացնելու համար: Եթե Արբիտրաժային պանելը իր զեկույցը պատրաստելիս հաշվի է առնում տեղեկատվությունը և/կամ խորհրդատվությունները, նա նաև պարտավոր է հաշվի առնել այդ տեղեկատվության և/կամ խորհրդատվությունների վերաբերյալ վեճի Կողմերի ցանկացած մեկնաբանությունները: Տեղեկատվությունը և/կամ խորհրդատվությունները իրավաբանական պարտադիր ուժ չունեն:

5. Արբիտրաժային պանելը պետք է բոլոր ջանքերը գործադրի իր ընթացակարգային որոշումների, եզրակացությունների և փոխհամաձայնության հիման վրա ընդունված որոշումների նախագծերը կազմելու համար, պայմանով, որ Արբիտրաժային պանելի կողմից փոխհամաձայնության չհասնելու դեպքում, այդպիսի ընթացակարգային որոշումները, եզրակացությունները և որոշումները կարող են ընդունվել ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային պանելը իր զեկույցում պետք է նշի արբիտրների տարբերվող կարծիքները այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն համաձայնեցվել միաձայն, առանց բացահայտելու, թե որ արբիտրներն են ձևավորել մեծամասնության կամ փոքրամասնության կարծիքները::

6. Արբիտրաժային պանելի լսումները չպետք է հասանելի լինեն հասարակության համար, եթե վեճի Կողմերը չպայմանավորվեն այլ բանի մասին:

7. Վեճի Կողմերին պետք է հնարավորություն տրվի մասնակցել քննության շրջանակներում ցանկացած ելույթների, հայտարարությունների կամ հերքումների ժամանակ: Ցանկացած տեղեկատվությունը կամ վեճի Կողմից ստացված Արբիտրաժային պանելին գրավոր ներկայացումները, ներառյալ սկզբնական զեկույցի նկարագրական մասի վերաբերյալ ցանկացած մեկնաբանությունները և Արբիտրաժային պանելի կողմից տրված հարցերի պատասխանները պետք է տրամադրվեն նաև վեճի մյուս Կողմին:

8. Արբիտրաժային պանելի քննարկումները և դրան ներկայացված փաստաթղթերը պետք է պահպանվեն գաղտնի: Ներքին քննարկումների

անցկացման համար Արբիտրաժային պանելը պետք է գումարի դռնփակ նիստեր, որոնց մասնակցում են միայն Արբիտրները: Արբիտրաժային պանելը կարող է թույլատրել ներկա գտնվել քննարկումներին նաև իր օգնականներին: Վեճի Կողմերը կարող են ներկա գտնվել նիստերին միայն Արբիտրաժային պանելի կողմից հրավիրված լինելու դեպքում:

9. Ոչինչ սույն Հավելվածում չի կարող խոչընդոտել վեճի Կողմին հրապարակել քննարկվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը: Վեճի Կողմը պարտավոր է գաղտնի պահել Արբիտրաժային պանելին վեճի մյուս Կողմի տրամադրած տեղեկատվությունը, որը այդ մյուս Կողմը նշել է որպես գաղտնի տեղեկատվություն: Վեճի Կողմը պետք է նաև մյուս Կողմի հարցման դեպքում տրամադրի իր գրավոր փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության ոչ գաղտնի համառոտ տեսությունը, որը կարող է հրապարակվել:

10. Լսումների անցկացման վայրը որոշվում է վեճի Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ: Պայմանավորվածության բացակայության դեպքում, լսումները պետք է անցկացվեն հերթականությամբ՝ վեճի Կողմերի մայրաքաղաքներում, ընդ որում առաջին լսումը պետք է անցկացվի պատասխանող Կողմի մայրաքաղաքում: Եթե Եվրասիական տնտեսական միությունը հանդես է գալիս որպես վեճի Կողմ սույն Հավելվածի դրույթներին համապատասխան, համապատասխան հերթական լսումներն անցկացվում են Մոսկվայում, Ռուսաստանի Դաշնություն:

Հոդված 11

Քննության կասեցում և դադարեցում

1. Արբիտրաժային պանելը պետք է Կողմերի համատեղ պահանջով ցանկացած ժամանակ կասեցնի իր աշխատանքը՝ այդպիսի համատեղ պահանջը ստանալուց հետո հաջորդող տասներկու (12) ամսից ոչ ավել ժամկետով: Այդ դեպքում վեճի Կողմերը գրավոր ձևով համատեղ ծանուցում են Արբիտրաժային պանելի Նախագահին, իսկ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդպիսի ծանուցման մասին: Այդ ժամանակահատվածում վեճի ցանկացած Կողմ կարող է լիազորել Արբիտրաժային պանելին վերսկսել իր աշխատանքը՝ Արբիտրաժային պանելի Նախագահին և վեճի մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Եթե Արբիտրաժային պանելի աշխատանքը կասեցվել էր հաջորդող տասներկու (12) ամսից ավելի երկար ժամանակով, Արբիտրաժային պանելի ձևավորման իրավունքը կորցնում է իր ուժը (իսկ վեճի կարգավորման ընթացակարգն ավարտվում է), եթե Կողմերը չպայմանավորվեն այլ բանի մասին: Արբիտրաժային պանելի աշխատանքի կասեցման դեպքում, սույն Հավելվածով նշանակված համապատասխան ժամկետները երկարաձգվում են Արբիտրաժային պանելի աշխատանքի կասեցման ժամանակահատվածով:

2. Արբիտրաժային պանելի աշխատանքը դադարեցվում է վեճի Կողմերի համատեղ հարցմամբ ցանկացած ժամանակ մինչև Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցի ներկայացումը: Այդ դեպքում վեճի Կողմերը համատեղ ծանուցում են այդ մասին Արբիտրաժային պանելի Նախագահին, իսկ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդպիսի ծանուցման մասին:

Հոդված 12

Արբիտրաժային պանելի զեկույցները

1. Արբիտրաժային պանելի զեկույցները կազմվում են վեճի Կողմերի բացակայությամբ և հիմնվում են սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների, վեճի Կողմերի պանելին ներկայացված փաստաթղթերի և հիմնավորումների, ինչպես նաև սույն Հավելվածի 10-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներկայացված ցանկացած տեղեկատվության և/կամ խորհրդատվությունների վրա:

2. Արբիտրաժային պանելը պետք է ներկայացնի իր սկզբնական զեկույցը Արբիտրաժային պանելի ձևավորման օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում, կամ, անհետաձգելի դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների հետ կապված դեպքերում՝ վաթսուն(60) օրվա ընթացքում: Սկզբնական զեկույցը մնացածից բացի պետք է պարունակի նկարագրական մաս, ինչպես նաև Արբիտրաժային պանելի կողմից պարզված փաստեր, համապատասխան դրույթների կիրառելիությունը, ստացված ցանկացած տվյալների հիմնավորումը, նրա առաջարկությունները և եզրակացությունները:

3. Բացառիկ հանգամանքներում, եթե Արբիտրաժային պանելը եզրակացնում է, որ չի կարողանա ներկայացնել իր սկզբնական զեկույցը սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետներում, Արբիտրաժային պանելի նախագահը պետք է վեճի Կողմերին գրավոր ձևով ծանուցի ուշացման պատճառի մասին՝ միաժամանակ նշելով այն ենթադրվող ժամկետը, որի ընթացքում կներկայացնի իր սկզբնական զեկույցը, և Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի ծանուցման մասին: Ցանկացած ուշացում չպետք է գերազանցել երեսուն (30) օրը, եթե վեճի Կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն:

4. Վեճի ցանկացած Կողմ կարող է ներկայացնել Արբիտրաժային պանելի սկզբնական զեկույցի վերաբերյալ իր գրավոր մեկնաբանությունները դրա ստացման օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում, եթե վեճի Կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն: Այդպիսի գրավոր մեկնաբանությունների վերաբերյալ վեճի մյուս Կողմը կարող է ներկայացնել իր մեկնաբանությունները՝ կողմից դրանք ստանալու օրվանից վեց (6) օրվա ընթացքում: Եթե ոչ մի Կողմից մեկնաբանություններ չեն ներկայացվել, սկզբնական զեկույցը պետք է դիտարկվի որպես վերջնական զեկույց:

5. Սկզբնական զեկույցի վերաբերյալ վեճի Կողմերի գրավոր մեկնաբանությունները քննարկելուց և ցանկացած լրացուցիչ ուսումնասիրություններ անցկացնելուց հետո, Արբիտրաժային պանելը պետք է վեճի Կողմերին տրամադրի իր վերջնական զեկույցը, որը պարունակում է վեճի վերաբերյալ որոշումը և սկզբնական որոշումը՝ սկզբնական զեկույցի ներկայացման օրվանից երեսուն (30) օրվա ընթացքում, եթե Կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն: Անհետաձգելի դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների նկատմամբ՝ Արբիտրաժային պանելը պետք է գործադրի բոլոր ջանքերը իր վերջնական զեկույցը

սկզբնական զեկույցի ներկայացման օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում ներկայացնելու համար, եթե Կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն:

6. Եթե Արբիտրաժային պանելը գտնում է, որ նշված ժամկետը հնարավոր չէ պահպանել, Արբիտրաժային պանելի նախագահը պետք է Կողմերին գրավոր ձևով ծանուցի այդ մասին՝ նշելով ուշացման պատճառը և վերջնական զեկույցի պլանավորվող ամսաթիվը: Արբիտրաժային պանելը պետք է ցանկացած հանգամանքներում ներկայացնի իր վերջնական զեկույցը ոչ ուշ, քան Արբիտրաժային պանելի ձևավորումից հարյուր հիսուն (150) օր հետո կամ անհետաձգելի դեպքերում, այդ թվում շուտ փչացող ապրանքների հետ կապված՝ ութսուն(80) օր հետո:

7. Եթե իր վերջնական զեկույցում Արբիտրաժային պանելը եզրակացնում է, որ պատասխանող Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրին, ապա իր եզրակացություններում և որոշման մեջ պետք է ներառի անհամապատասխանությունը վերացնելու մասին առաջարկություն:

8. Վեճի Կողմերը պետք է հրապարակեն Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցն այն ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում, գաղտնի տեղեկատվությունը պահպանելու պայմանով, եթե վեճի Կողմերից ոչ մեկը չի առարկում: Այդ դեպքում վերջնական զեկույցը նաև պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի բոլոր Կողմերին՝ զեկույցը վեճի Կողմերին ներկայացնելուց յոթ (7) օր հետո:

9. Կողմերը պետք է անվերապահորեն ընդունեն Արբիտրաժային պանելի որոշումները և զեկույցները: Դրանք ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ որևէ իրավունքներ ու պարտավորություններ չեն առաջացնում: Արբիտրաժային պանելի որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Հոդված 13

Պարզաբանումների համար հարցում

1. Վերջնական զեկույցը ստանալու օրվանից տաս (10) օրվա ընթացքում վեճի Կողմը կարող է Արբիտրաժային պանելին ներկայացնել գրավոր հարցում, խնդրելով պարզաբանել վերջնական զեկույցում տեղ գտած ցանկացած եզրակացություն կամ առաջարկություն, որոնք Կողմը համարում է անորոշ: Արբիտրաժային պանելը պետք է պատասխանի հարցմանը դրա ստացման օրվանից տաս (10) օրվա ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ներկայացված հարցումը չպետք է ազդի սույն Հավելվածի 14-րդ հոդվածում և 17-րդ հոդվածում նշված ժամկետների վրա, եթե միայն Արբիտրաժային պանելն այլ կերպ չի որոշում:

Հոդված 14

Որոշման կատարումը

1. Վեճի Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները առանց անհիմն ուշացումների Արբիտրաժային պանելի որոշումը կատարելու համար:

2. Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, պատասխանող Կողմը պետք է ծանուցի հայցվոր Կողմին հետևյալի մասին.

a) սույն հոդվածի 1-ին կետում սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկվելիք միջոցների մասին, և

b) Արբիտրաժային պանելի վերջնական որոշումը կատարելու համար անհրաժեշտ ժամկետի մասին:

Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդ ծանուցման մասին:

Հոդված 15

Ողջամիտ ժամկետ

1. Արբիտրաժային պանելի որոշման անհապաղ կատարելը անհնարին լինելու դեպքում, վեճի Կողմերը պետք է ջանքեր գործադրեն Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցի կատարման համար ողջամիտ ժամկետը համաձայնեցնելու համար:

2. Վեճի Կողմերի միջև սույն Հավելվածի 14-րդ հոդվածի 2 (b) կետին համապատասխան առաջարկվող ժամկետների շուրջ պայմանավորվածություն ձեռք չբերվելու դեպքում, վեճի ցանկացած Կողմ իրավունք ունի գրավոր ձևով դիմել ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելին՝ խնդրելով սահմանել որոշումը կատարելու համար ողջամիտ ժամկետի տևողությունը: Այդպիսի հարցման մասին պետք է միաժամանակ տեղեկացվի վեճի մյուս Կողմը, և Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի նման հարցման մասին: Հարցումը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում Արբիտրաժային պանելը վեճի Կողմերին պետք է տրամադրի իր որոշումը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ և նշելով այն սահմանելու հիմքերը:

3. Եթե Արբիտրաժային պանելը գտնում է, որ չի կարող սահմանել ողջամիտ ժամկետի տևողությունը սույն հոդվածի 2-րդ կետում սահմանված ժամկետներում, ապա այն պետք է գրավոր ձևով հայտնի վեճի Կողմերին ուշացման պատճառի մասին՝ նշելով իր որոշում ընդունելու համար ենթադրվող ժամկետների մասին: Ցանկացած ուշացում չպետք է գերազանցի երեսուն (30) օրը, եթե Կողմերն այլ բանի մասին չպայմանավորվեն:

4. Վեճի Կողմերը կարող են ցանկացած ժամանակ շարունակել փնտրել Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցի կատարման համար իրենց փոխադարձ բավարարող լուծում:

5. Պատասխանող Կողմը պետք է գրավոր ձևով ծանուցի հայցվոր Կողմին սույն Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունների չկատարումը վերացնելու և Արբիտրաժային պանելի որոշումը կատարելու համար ձեռնարկված

ցանկացած միջոցների մասին ողջամիտ ժամկետը լրանալուց առաջ առնվազն երեսուն (30) օր առաջ: Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի ծանուցման մասին:

6. Վեճի Կողմերը կարող են համաձայնեցնել ողջամիտ ժամկետի երկարաձգումը:

Հոդված 16

Համապատասխանության դիտարկում

1. Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցի կատարման համար ձեռնարկված ցանկացած միջոցի պատշաճ լինելու վերաբերյալ վեճի Կողմերի միջև անհամաձայնություն լինելու դեպքում, հայցվոր Կողմը կարող է գործնականում հնարավորին լինելուն դեպքում անհապաղ կամ սույն Հավելվածի 15-րդ հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետում գրավոր ձևով դիմել ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելին այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հարցումով:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հարցումը Արբիտրաժային պանելին կարող է ուղղվել միայն ներքոհիշյալ ժամկետներից ավելի վաղ վրա հասնող ժամկետը լրանալուց հետո.

a) սույն Հավելվածի 15-րդ հոդվածին համապատասխան սահմանված ողջամիտ ժամկետի ավարտը, կամ

b) պատասխանող Կողմի՝ իր կողմից սույն Հավելվածի 14-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան պարտավորությունը կատարելու վերաբերյալ հայցվոր Կողմին ծանուցման ժամկետը, որում պարունակվում է այդ պարտավորությունը կատարելու համար ձեռնարկված միջոցների նկարագրությունը:

Հարցումը պետք է ներկայացնի խնդրին առնչվող ցանկացած միջոցը և բողոքի իրավական հիմքը հստակ ներկայացնելու համար բավարար ձևով պարզաբանի, թե այդ միջոցն ինչպես է խախտում վերաբերելի դրույթները:

3. Արբիտրաժային պանելը պետք է օբյեկտիվորեն գնահատի իրեն իր քննությանը ներկայացված հարցը, ներառյալ օբյեկտիվ գնահատելով.

a) պատասխանող Կողմից պարտավորությունների կատարման նպատակով ձեռնարկված ցանկացած գործողության փաստացիասպեկտները, և

b) պատասխանող Կողմի՝ սույն Հավելվածի 14-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան պարտավորությունների կատարումը:

4. Արբիտրաժային պանելն իր որոշումը պետք է ներկայացնի վեճի Կողմերին հարցումը ստանալուց հետո երեսուն(30) օրվա ընթացքում սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան: Զեկույցը պետք է ներառի Արբիտրաժային պանելի որոշումը և այդ որոշման կայացման հիմքերը:

5. Եթե Արբիտրաժային պանելը եզրակացնում է, որ չի կարողանա ներկայացնել իր զեկույցը սույն հոդվածի 4-րդ կետում սահմանված ժամկետներում, այն պետք է գրավոր ձևով հայտնի վեճի Կողմերին ուշացման պատճառը՝ միժամանակ նշելով զեկույցի տրամադրման համար ենթադրվող ժամկետը: Ցանկացած ուշացում չի կարող գերազանցել երեսուն(30) օր ժամկետը, եթե վեճի Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել:

6. Ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելի արբիտրներից ցանկացածի անհասանելի լինելու դեպքում, կիրառվում են սույն Հավելվածի 8-րդ հոդվածում նկարագրված ընթացակարգերը:

Հոդված 17

Չկատարման դեպքում ժամանակավոր միջոցները

1. Եթե պատասխանող Կողմը չի կատարում Արբիտրաժային պանելի որոշումը, գործնականում անհապաղ կամ սույն Հավելվածի 15-րդ հոդվածին համապատասխան սահմանված ողջամիտ ժամկետում, կամ

a) սույն Հավելվածի 14-րդ հոդվածում նշված ժամկետներում կամ մինչև ողջամիտ ժամկետը լրանալու ավարտը չի ուղարկում կատարման նպատակով ցանկացած միջոցի ձեռնարկման վերաբերյալ ծանուցումը,

b) ծանուցում է հայցվոր Կողմին այն մասին, որ մտադիր չէ կատարել Արբիտրաժային պանելի որոշումը, և/կամ

c) եթե ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելը որոշում է, որ պատասխանող Կողմը սույն Հավելվածի 14-րդ հոդվածին համապատասխան չի կատարել Արբիտրաժային պանելի որոշումը,

պատասխանող Կողմը պետք է, հայցվոր Կողմից նման հարցման դեպքում, խորհրդատվություններ անցկացնի՝ փոխընդունելի ժամանակավոր փոխհատուցումը համաձայնեցնելու նպատակով: Հարցումը ստանալու պահից քսան (20) օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, հայցվոր Կողմը իրավունք ունի պատասխանող Կողմին գրավոր ձևով ծանուցելուց հետո կասեցնել սույն Համաձայնագրին համապատասխան պատասխանող Կողմին տրամադրվող զիջումների կամ այլ արտոնությունների գործողությունը, բայց միայն համարժեք նրանց, որոնք ենթարկվել են Արբիտրաժային պանելի կողմից սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցի ազդեցությանը: Այդպիսի ծանուցումը ուղարկվում է այդպիսի կասեցումը ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն երեսուն(30) օր առաջ: Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի ծանուցման մասին:

2. Կասեցվող զիջումները ընտրելիս հայցվոր Կողմին հարկավոր է առաջին հերթին ուսումնասիրել այն նույն հատվածում կամ հատվածներում սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումների և այլ պարտավորությունների գործողության կասեցումը, որոնք ենթարկվում են Արբիտրաժային պանելի կողմից Համաձայնագրին չհամապատասխանող

ճանաչված միջոցի ազդեցությանը: Եթե հայցվոր Կողմը գտնում է, որ սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումների կամ այլ պարտավորությունների գործողության կասեցումը գործնականապես անհնարին է կամ ոչ արդյունավետ նույն հատվածում կամ հատվածներում, նա իրավունք ունի կասեցնել սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումների կամ այլ պարտավորությունների գործողությունը այլ հատվածներում:

3. Այդպիսի ծանուցումը ստանալու պահից տասնհինգ(15) օրվա ընթացքում պատասխանող Կողմը կարող է ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելին խնդրել որոշում կայացնել այն մասին, թե արդյոք սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումները կամ այլ արտոնությունները, որոնք հայցվոր Կողմը մտադիր է կասեցնել համարժեք են նրանց, որոնք ենթարկվել են սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցի ազդեցությանը և արդյոք առաջարկվող կասեցումը համապատասխանում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին: Արբիտրաժային պանելիան վերապահորեն անպայման ընդունվի Կողմերի կողմից: Արտոնությունները կասեցման ենթակա չեն մինչև Արբիտրաժային պանելի որոշման կայացումը:

4. Սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումների կամ այլ պարտավորությունների գործողության կասեցումը ժամանակավոր է և կիրառվում է հայցվոր Կողմի կողմից միայն մինչև որ.

a) Արբիտրաժային պանելի վերջնական զեկույցի կատարման նպատակով ձեռնարկված ցանկացած միջոց, որը ճանաչվել է վերաբերելի դրույթներին չհամապատասխանող, հետ չի կանչվում կամ չի փոփոխվում, որպեսզի ապահովի պատասխանող Կողմի կողմից այդպիսի դրույթների կատարումը,

b) Արբիտրաժային պանելը չի որոշում. որ որոշման կատարման միջոցը համապատասխանում է իր որոշմանը և սույն Համաձայնագրի դրույթներին, կամ

c) Կողմերը այլ ձևով չեն կարգավորում վեճը կամ չեն կայացնում փոխընդունելի որոշում:

5. Վեճի Կողմի հարցմամբ ի սկզբանե ձևավորված Արբիտրաժային պանելը պետք է որոշում ընդունի, թե արդյոք սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող զիջումների կամ այլ պարտավորությունների գործողության կասեցումից հետո ընդունված որոշման կատարման միջոցները համապատասխանում են իր վերջնական զեկույցին, և այդ որոշումների ներքո՝ արտոնությունների գործողության կասեցումը դադարեցնելու կամ փոխելու մասին: Արբիտրաժային պանելի որոշումներն ընդունվում են նշված հարցումը ստանալու օրվանից երեսուն(30) օրվա ընթացքում:

Հոդված 18

Ընդհանուր դրույթներ

Սույն Հավելվածին համապատասխան ուղարկվող բոլոր ծանուցումները, հարցումները և պատասխանները կազմվում են գրավոր ձևով:

Հոդված 19

Փոխընդունելի որոշում

1. Վեճի Կողմերը սույն Հավելվածի 3-րդ հոդվածում նախատեսված ցանկացած վեճի առնչությամբ կարող են ցանկացած ժամանակ հասնել փոխընդունելի որոշման :

2. Եթե փոխընդունելի որոշումը ընդունվել է Արբիտրաժային պանելի կողմից վեճի քննության ընթացքում կամ միջնորդության ընթացակարգի շրջանակներում, վեճի Կողմերը այդ որոշման մասին համատեղ ծանուցում են Արբիտրաժային պանելի Նախագահին կամ միջնորդին, համապատասխանաբար, և Համատեղ կոմիտեն պետք է տեղեկացվի այդպիսի ծանուցման մասին: Այդպիսի ծանուցմամբ Արբիտրաժային պանելը կամ միջնորդության ընթացակարգը դադարեցվում է:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի միջոցներ, որոնք անհրաժեշտ են փոխընդունելի որոշումը համաձայնեցված ժամկետներում իրականացնելու համար:

4. Համաձայնեցված ժամկետը լրանալուց ոչ ուշ, որոշումը իրականացնող Կողմը պետք է գրավոր ձևով տեղեկացնի մյուս Կողմին փոխընդունելի որոշումը իրականացնելու նպատակով իր կողմից ընդունված ցանկացած միջոցի մասին:

Հոդված 20

Ժամկետները

Սույն Հավելվածում սահմանված բոլոր ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով, սկսած այն օրվանից(տեղեկանքի, ծանուցագրի, հաղորդագրության կամ առաջարկության ստացում), որը հաջորդում է վկայակոչվող գործողությանը կամ փաստին, եթե հակառակը չի նշվել: Եթե այդպիսի ժամկետի վերջին օրը համընկնում է հասցեատեր Կողմի պաշտոնական տոնի կամ ոչ աշխատանքային օրվա հետ, ժամկետը երկարաձգվում է մինչև այդպիսի օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պաշտոնական տոները կամ ոչ աշխատանքային օրերը, որոնք հանդիպում են ցանկացած ժամկետի ներսում, ներառվում են այդպիսի ժամկետի հաշվարկի մեջ:

Սույն Հավելվածում սահմանված ցանկացած ժամկետ կարող է փոխվել վեճի Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ:

Արբիտրաժային պանելը կարող է ցանկացած ժամանակ առաջարկել Կողմերին փոխել սույն Հավելվածում սահմանված ցանկացած ժամկետ՝ նշելով այդ առաջարկության պատճառներտ:

Հոդված 21

Վարձատրություն և ծախսեր

1. Եթե վեճի Կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվել.

a) վեճի յուրաքանչյուր Կողմ հոգում է իր կողմից նշանակված արբիտրի ծախսերը, իր սեփական ծախսերը և դատական ծախսերը, որոնք բխում են Արբիտրաժային պանելին կամ միջնորդության ընթացակարգերին մասնակցելուց, և

b) Արբիտրաժային պանելի Նախագահի, միջնորդի և այլ ծախսերը, որոնք կապված են Արբիտրաժային պանելի քննությունների անցկացման հետ, բաշխվում են վեճի Կողմերի միջև հավասար մասնաբաժիններով:

2. Վեճի Կողմի հարցմամբ Արբիտրաժային պանելը կարող է որոշել սույն հոդվածի 1-ին կետի b) ենթակետում նշված ծախսերի բաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:

Հոդված 22

Լեզուն

1. Սույն Հավելվածի համաձայն բոլոր վարույթները իրականացվում են անգլերեն լեզվով:

2. Սույն Հավելվածի համաձայն քննությունների շրջանակներում օգտագործման համար ներկայացված ցանկացած փաստաթուղթ պետք է լինի անգլերեն լեզվով: Եթե որևէ փաստաթղթի բնօրինակը անգլերեն լեզվով չէ, այդ փաստաթուղթը ներկայացնող վեճի Կողմը պետք է ներկայացնի այդ փաստաթղթի անգլերեն լեզվով թարգմանությունը:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն